



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Սփիւռքի Նախարարի Այցելութեան Առթիւ

«Մասիս» երկշաբաթեայ արձակուրդի ընթացքին տեղի ունեցաւ կարեւոր իրադարձութիւն հայ համայնքի կեանքէն ներս: Լոս Անճելոս այցելեց Սփիւռքի նորանշանակ նախարար Մխիթար Յայրապետեան: Այցելութեան նախօրեակին համայնքէն ներս ստեղծուեցան որոշ տարակարծութիւններ, երբ կարգ մը անհատներու կողմէ փորձ կատարուեցաւ «առեւանգելու» նախարարի այցելութիւնը ու զայն օգտագործելու անձնական նպատակներու համար: Բարեբախտաբար, նախարարը անմիջապէս տիրապետելով ստեղծուած կացութեան, կարողացաւ առաջը առնել անհասկացողութիւններուն ու այցելութիւնը անցաւ սահուն ու պսակուեցաւ յաջողութեամբ:

Բաւականին խճողուած յայտագրի մը ընթացքին, նախարարը հանդիպեցաւ համայնքի գրեթէ բոլոր կազմակերպութիւններուն հետ, այցելեց շարք մը ազգային հաստատութիւններ ու առիթը ունեցաւ 2փոստային հայրութեան հետ:

Իր երիտասարդ տարիքին ու «անփորձառութեան» մասին Յայաստանի ու սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող կարծիքները փարատելով, նախարար Յայրապետեան ձգեց ամբողջովին այլ խիստ դրական տպաւորութիւն, բոլոր անոնց մօտ, որոնք առիթը ունեցան լսելու անոր հրապարակային ելոյթները: Ան կարողացաւ յստակ բանաձեւել Սփիւռքի նախարարութեան որդեգրած նոր ճանապարհային ուղին՝ գործակցելու սփիւռքի տարբեր համայնքներուն ու հոն գործող կազմակերպութիւններուն ու անհատ գործիչներուն հետ, լսելու բոլորի կարծիքներն ու առաջարկութիւնները ու միասնաբար ստատրելու նոր Յայաստանի կերտումին: Նախարարը եկաւ փաստելու որ, ինք արդէն իսկ տիրապետած է իր պաշտօնի նրբերանգներուն ու յստակ պատկերացում ունի սպասուող բոլոր մարտահրաւերներու մասին:

Առանց թերագնահատելու անցնող տարիներուն Սփիւռքի նախարարութեան գործունէութիւնը, պետք է ընդունիլ որ, հոն կը պակսէր Յայաստանի գործող իշխանութիւններուն նկատմամբ հաւատքն ու համակրանքը, երեւոյթներ որոնք մեծապէս արգելք կը հանդիսանային Յայաստան-սփիւռք կապերը ակնկալուած բարձրութեան վրայ դնելուն:

Ներկայիս Յայրեմիքէն ներս կը տիրէ բարոյահոգեբանական նոր իրավիճակ, որ կը տարածուի նաեւ սփիւռքի վրայ: Նախարար Յայրապետեան իր այցելութեամբ սփիւռքի ամենէն բազմամարդ ու Յայաստանի առօրեայով ապրող այս գաղութը դրաւ նոր պարտաւորութիւններու առջեւ:

«ՄԱՍԻՍ»

ՅԲԾ Պետ. «Քոչարեանը Կալանքի Տակ Պահելը Անհրաժեշտ է Քննութեան Վրայ Անոր Ազդեցութիւնը Բացառելու Համար»

«Մասնաճարական կարգը տապալելու մէջ մեղադրուող Ռոպերթ Քոչարեանը կալանքի տակ պահելը այս պահուն անհրաժեշտութիւն է», յայտարարեց Հայաստանի Յատուկ Քննչական ծառայութեան պետ Սասուն Խաչատրեան:

Մարտի 1-ի գործը քննող մարմնի ղեկավարն ընդգծած է, որ կալանաւորումն անհրաժեշտ է քննութեան ընթացքին Քոչարեանի պատշաճ վարքագիծը ապահովելու համար: «Թիւր կարծիք կայ ձեւաւորուած, որ պատշաճ վարքագիծը ընդամէնը փախուստի դիմելու հաւանականութիւնն է, բայց միշտ մոռացուած է երկրորդ՝ իմ կարծիքով առաւել կարեւոր հանգամանքը, որ պատշաճ վարքագիծի ամենակարեւոր բաղադրիչը մեղադրելի կողմից վարուած մասնակցող անձանց վրայ ապօրինի ազդեցութիւնը բացառելն է: Հենց այս կարեւոր նախապայմանից ելնելով՝ ես գտնում եմ, որ Ռոպերթ Քոչարեանին կալանքի տակ պահելը անհրաժեշտ է այս պահին, որպէսզի մենք կարողանանք լրիւ ծաւալով քննութիւն կատարել», ըսած է Խաչատրեան:

Տասը տարի Հայաստանը ղեկավարած Ռոպերթ Քոչարեանը Յուլիս 27-ին կալանաւորուեցաւ 2008-ի Մարտի 1-եան արիւնալի իրադարձութիւններու ժամանակ սահմանադրական կարգը տա-



Յայաստանի Յատուկ Քննչական ծառայութեան պետ Սասուն Խաչատրեան

պալելու մեղադրանքով:

Երկրորդ նախագահը կալանաւորելու որոշման դէմ բողոք ներկայացուած է վերաքննիչ դատարան: Քոչարեանի գրասենեակի ղեկավարը փոխանցած էր, որ Ազգային ժողովի 45 պատգամաւորներ անձնական երաշխաւորութեամբ հանդէս եկած են պաշտօնաթող նախագահը կալանքէն ազատելու համար:

Երկրորդ նախագահը կալանաւորելու միջնորդութիւն ներկայացուցած Յատուկ քննչական ծառայութեան ղեկավարն արձագանգած է Քոչարեանի պաշտպաններու այն պնդումներուն, թէ ներկայացուած մեղադրանքը հասկնալի չէ, եւ քննչական մարմինը

իրաւական անգրազիտութիւն ցուցաբերած է. - «Մեղադրանքի որոշումը այնքան յստակ է, այնքան պարզ է եւ այնքան հիմնաւորուած, որ ինձ համար նոյնիսկ անհասկանալի են եւ տեղ-տեղ նաեւ ծիծաղելի՝ այդ որոշակի մանրփոխացիւնները (ձեռնապարտութիւնները), որոնք փորձուած են արուել պաշտպանական կողմի ներկայացուցիչների կողմից: Ռոպերթ Քոչարեանը մեղադրուած է սահմանադրական կարգը բռնի տապալելու մէջ: Նման մեղադրանք առաջադրելու համար հիմք է հանդիսացել բանակի ներգրաւումը: Բանակի ներգ-

Շար.ը էջ 4

ՍԴՀԿ Պատուիրակութեան Հանդիպումը Սփիւռքի Նախարար Մխիթար Յայրապետեանի Հետ



Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան պատուիրակութիւնը Սփիւռքի նախարար Մխիթար Յայրապետեանի հետ

Չորեքշաբթի, Օգոստոս 1-ին, Ս.Գ. Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, ՀՀ Լոս Անճելոսի Հիւպատոսարանէն ներս հանդիպում ունեցաւ Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեանի հետ, որ իր առաջին այցելութիւնը կու տար Լոս Անճելոսահայ համայնքին:

Հնչակեան պատուիրակութիւնը նախ շնորհակտեց Հայաս-

տանի մէջ յեղափոխութեան չաղթանակը, ու այս առթիւ ողջոյնները եւ զօրակցութիւնը փոխանցեց վարչապետի Նիկոլ Փաշինեանի զխաւորած կառավարութեան:

Հանդիպումի ընթացքին քննարկուեցան նախարարի այցելութեան առնչուող կարգ մը հարցեր: Այս առթիւ նախարարը հաս-

Շար.ը էջ 5

Կլէնտէլի Քաղաքապետական Խորհուրդը Հաստատեց Հայ-Ամերիկեան Թանգարանի Ծրագիրը

Կլէնտէլի քաղաքապետական Խորհուրդը միաձայնութեամբ հաստատեց Հայ-Ամերիկեան Թանգարանի կառուցման ծրագրի երկրորդ հանգրուանը եւ բնապահպանութեան պահանջներուն համապատասխանող ծրագիրը: Կը սպասուի որ, Օգոստոս 14-ին Խորհուրդը վերջնական որոշում կ'ընդունի պատմական այս ծրագիրին:

Կլէնտէլի կեդրոնական զբօսայգի հողամասին վրայ (Պրէնտ եւ Քոլորադոս պողոտաներու անկիւնը) կառուցուելիք Թանգարանի տարածքին վարձակալման համաձայնագիրը կը նախատեսէ տարեկան մէկ տոլար խորհրդանշական գումարի վճարում՝ 55 տարուայ ժամանակաշրջանով: Թանգարանը իրաւունք պիտի ունենայ երկարաձգելու պայմանագիրը՝ յաւելելով 40 տարի:

Ծրագիրին իր համաձայնութիւնը տուած է նաեւ Կլէնտէլի Պատմական դիմագիծը պաշտպանող ընկերակցութիւնը:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Նոր Սպառնալիքներ Ալիեից՝ Հայաստանին ու Արցախին

ԹԱՍԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ատրպեյձանի նախագահ Իլհամ Ալիևը հերթական անգամ սպառնացել է Արցախի հիմնահարցում դիմել բանակի օգնությանը: Ալիևը հերթական անգամ պնդել է իր այն թէզը, որ Հայաստանում նախկին իշխանութիւնների տապալման գործում մեծ դերակատարութիւն է ունեցել Ատրպեյձանի վարած քաղաքականութիւնը, քանի որ ապրիլեան քառօրեայ բախումները «հարուած հասցրին նրանց փտած հենասյուներին»: Ընդ որում, Ալիևը սպառնացել է շարունակել այդ քաղաքականութիւնը: «Ատրպեյձանի եւ Հայաստանի միջեւ մեծ անդունդ կայ տնտեսական առումով: Ընթացիկ տարուայ Յունիսին տեղի ունեցած ռազմական շքերթը ցոյց տուեց՝ ով ինչի է ընդունակ: Մենք օգտուում ենք, եւ յետոյ էլ կ'օգտուենք այդ հնարաւորութիւններին», - ասել է Ալիևը:

Ինչ վերաբերում է հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը Ալիևն ասել է, թէ կասկածում է, որ Հայաստանի նոր իշխանութիւնները պատրաստուած են աշխատել ԼՂ-ի հակամարտութեան կարգավորման շուրջ. «Հայաստանի նոր իշխանութիւնները չպետք է թոյլ տան նախորդ խուսափի սխալները ԼՂ- կարգաւորման հարցում: Սակայն Հայաստանի նոր իշխանութիւնները հանդես են գալիս հակասական յայտարարութիւններով, որոնք դժուար է հասկանալ ինչպէս մեզ, այնպէս էլ միջազգային կազմակերպութիւններին», - ասել է Ալիևը: Նա նաեւ նշել է, որ Ատրպեյձանի համար անընդունելի է բանակցութիւններում որպէս կողմ տեսնել Ղարաբաղը: Ալիևի խօսքով՝ Հայաստանի նոր իշխանութիւնների յայտարարութիւնները՝ «հարուած են հասցնում հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը», «ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է Հայաստանի իշխանութիւնների վրայ»: «Մենք խաղաղութիւն ենք ցանկանում: Մեզ մօտ առայժմ տպաւորութիւն է ձեւաւորուում, որ Հայաստանի իշխանութիւնները ցանկանում են շարունակել ատրպեյձանական հոդերի օկուպացումը: Մեր միջեւ խաղաղութիւն կարող է տիրել միայն օկուպացուած տարածքների ազատագրմամբ: Եթէ Հայաստանը խաղաղութիւն է ցանկանում, ապա հայ զինուորը պետք է լքի ադրբեյջանական տարածքները», - ասել է նա: «Հակամարտութիւնը պետք է լուծուի հնարաւորինս արագ եւ փուլ առ փուլ: Մենք եւ միջազգային հանրութիւնը դա ենք պահանջում: Եթէ Հայաստանի իշխանութիւնները շարունակեն օկուպացման քաղաքականութիւնը, ապա մենք կը շարունակենք Հայաստանը մեկուսացումը, կը շարունակենք կործանել նրանց», - սպառնացել է Ալիևը:

Արցախեան հակամարտութեան հարցով ՀՀ-ի Ատրպեյձանի արտգործնախարարների առաջիկայ հանդիպման մասին յստակ պայմանաւորութիւններ ղեկ չկալ, օրերս լրագրողների հետ ձեպագրությունում ասաց ՀՀ ԱԳՆ մամուլի խօսնակ Տիգրան Բալայեանը: «Վերջնական պայմանաւորութեան»

թիւն չկայ, թէ Բրիւսելում արտգործնախարարների առաջին հանդիպմանը նման հարց քննարկուել է», - նշեց նա:

Ինչ վերաբերում է Ատրպեյձանի նախագահ Իլհամ Ալիևի ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հնարաւոր հանդիպմանը, Տիգրան Բալայեանը ասել էր. «Նիկոլ Փաշինեանը վերահաստատել է պատրաստակամութիւնը, սակայն այդ հանդիպման մասին պայմանաւորութեան վերջին պահին չկայ»:

Սակայն ԱԳՆ խօսնակն ուշադրաւ դիտարկում էր արել, թէ՛ այդ հանդիպումն ինքնանպատակ էր կարող լինել. «Այն բովանդակային պէտք է լինի՝ Վիեննայի Սանկտ-Պետերբուրգի պայմանաւորութեան իրականացման վերահաստատման համատեքստում: Դա հնարաւորութիւն կը տայ ապահովել այնպիսի պայմաններ, որ պէտք չի խաղաղութեան հաստատման գործընթացում առաջընթաց արձանագրուի»:

Այսպէս, Երեւանը հաստատում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկը, սակայն նա չաւելում, որ պայմանաւորութեան ղեկ չկայ: Հայաստանը, սակայն կարող է շեշտադրում է անում՝ Վիեննայի, Սանկտ Պետերբուրգի ժնեկի գաղթածողովներում ձեռք բերուած պայմանաւորութեան իրականացմանը: Այս պայմանաւորութեան ղեկնումները վրայ հիմնուելով Երեւանը ցոյց է տալիս, թէ որդէպէտք կողմերը կարող են առաջ շարժուել ինդիքի կարգաւորման ուղղութեամբ:

Բայց ուշադրաւ է, որ Պաքուից էլ պնդում են, թէ Հայաստանի ու Ատրպեյձանի ԱԳ նախարարների հանդիպումը համաձայնեցուած է: Պաքուն եւ Երեւանը համաձայնել են երկու երկրների արտգործնախարարների հանդիպումը անցկացնել ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայի շրջանակներում, Նիւ Եորքում, յայտարարել է Ատրպեյձանի արտգործնախարարութեան մամուլի խօսնակը:

Յիշեցնենք, որ ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայի հերթական նստաշրջանը մեկնարկում է Սեպտեմբերին: Ձոհրաբ Մնացականեանի եւ էլմար Մամեդյարովի առաջին հանդիպումը կայացել է Յուլիսի 11-ին, Բրիւսելում:

Ի դէպ, ՀՀ ԱԳ նախարարն, արդէն իսկ այս հանդիպումից մէկ ամիս առաջ յստակեցրել է դիրքորոշումը: Հայաստանի արտգործնախարար Ձոհրաբ Մնացականեանը Իտալիայի արտգործնախարար էնցո Միլանեզիի հետ հանդիպմանը վերահաստատել է Հայաստանի յանձնառութիւնը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահութեան ձեւաչափում դարբաղեան հակամարտութեան բացառապէս խաղաղ կարգաւորմանը՝ ընդգծելով, որ հայկական կողմի համար բանակցային գործընթացում առաջնայնութիւններն են Արցախի կարգավիճակը եւ անվտանգութիւնը: Մնացականեանի խօսքով՝ Ատրպեյձանի կողմից շարունակաբար հնչող ռազմական հռետորաբանութիւնը եւ յայտացումներն սերմանում են ուղղութեան եւ խաղաղութեան հաստատման ուղղութեամբ ջանքերի տապալմանը:

«ՀԱՅԵԼԻ»

«Ամեղ» Քոչարեանի Լեզնդը

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Ռոբերտ Քոչարեանը Հայաստանում 10 տարի զբաղուած է եղել կոռուպցիոն տոտալ մեխանիզմների ստեղծմամբ. պատահական չէ, որ դատարկ գրպանով Արցախից Հայաստան եկած նախկին պարտկոմը պաշտօնավարման աւարտին ունէր արդէն չորս միլիարդ տոլարի կարողութիւն, եթէ հաւատանք միջազգային, այդ թուում՝ ռուսական, հեղինակաւոր պարբերականների տեղեկատուութեանը: Հիմա այս մարդու համար դժուար չէ էլիտար փաստաբանների թիւ պահել կամ մեղիա ռեսուրսներն օգտագործել՝ ազրեալ քարոզչութիւն ու հակաքարոզչութիւն իրականացնելու համար: Եթէ աւելի անկեղծ լինենք, Քոչարեանը նոյնիսկ փողերը «քամուն» չի տալիս՝ ներդնում է իր քաղաքական գործունէութեան վրայ, որովհետեւ Մարտի 1-ի գործը նա սկիսւած քաղաքականացում է՝ դարձնելով բաժանարար գիծ ու իրեն էլ՝ ներքաղաքական հակամարտ բեւեռի առաջնորդ:

Էլիտար փաստաբանները գրեթէ օնլայն ռեժիմով լրատուամիջոցների հետ կապի մէջ են ու առանց յոգնելու պնդում են, որ իր իրենց նոյնքան էլիտար յաճախորդն անմեղ է, այլ խօսքով՝ քաղաքական վեհապետի ու հետապնդման է ենթարկուում:

Հենց այս համատեքստում ուզում ենք մի փոքր քննադատական հայեացք նետել ՀԲԾ պետ Սասուն Խաչատրեանի՝ օրեր առաջ տուած հարցազրոյցին:

Խաչատրեանն ասում էր՝ 0038 հրամանի միւս մասերը չենք հրապարակում ու դա Քոչարեանի շահերից էլ է բխում: Առնուազն անհասկանալի մօտեցում է. կարծում ենք՝ Քոչարեանը նման հումանիտական վերաբերմունքի արժանի չէ՝ առնուազն այն պատճառով, որ նրա փաստաբանները շարունակ պնդում են նրա անմեղութիւնը՝ մշտապէս կասկածի տակ ղնելով ՀԲԾ պրոֆեսիոնալիզմը, շատ դէպքերում՝ ծաղրելով այս կառույցին ու նրա ղեկավարին՝ ինչպէս երէկուայ ասուլիսում դա արեց փաստաբան Ռուբէն Սահակեանը:

Նախաքննութեան նիւթերը չեն կարող հրապարակուել երկու պատճառով. եթէ դա չի բխում նախաքննութեան շահերից կամ, եթէ դրանց հրապարակումը կարող է խնդիրներ յարուցել ազգային անվտանգութեան տեսանկիւնից: Հիմա 0038 հրամանը գաղտնագրութեան է մասամբ ու արդէն ակնյայտ է, որ 2008-ի Մարտի 1-ին բանակն օգտագործուել է ներքաղաքական նպատակներով, կարճ ասած՝ Ռոբերտ Քոչարեանն իրականում գործողութիւն է կատարել երկրի սահմանադրական կարգի դէմ:

Սակայն նոյնիսկ այդ բացայտութիւնը յետոյ Քոչարեանի փաստաբանական խումբը աւելի բարձրաձայն է պնդում, որ երկրորդ նախագահն անմեղ է, աւելին՝ նրան սատարող ուժերը, մասնաւորապէս՝ երէկ ՀՅԴ-ն, հերթական անգամ բարձրաձայնեցին սեյեկաիւ արդարադատութեան մասին: ՀԲԾ-ն պէտք է նկատի ունենայ, որ Հայաստանի անցողաբանի ուշադիր հետեւում են ոչ միայն մեր հասարակութիւնն, այլ նաեւ՝ միջազգային կառույցները, որոնք յաճախ իրարամերժ կարծիքների ֆոնին աղճատուած կամ ոչ ամբողջ

ջական պատկերացում են կազմում Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւնները մասին: Ինչքան ՀԲԾ-ն օպերատիւ տեղեկատուութիւն տայ Մարտի 1-ի գործի նախաքննութեան մասին, այնքան բոլորի համար պատկերն ամբողջական կը դառնայ՝ թոյլ չտալով, որ Քոչարեանի պաշտպանները ջրեր պղտորէն կամ Ռուսաստանի արտգործնախարարը յայտարարի նախկին իշխանութիւնների հետապնդումների մասին:

Պաշտպանութեան նախարարի 2008-ի Փետրուարի 23-ի թիւ 0038 հրամանը պէտք է հրապարակուել, եթէ, իհարկէ, դա չի վնասելու նախաքննութեանը կամ սպառնալիք չի ստեղծելու երկրի անվտանգութեան համար:

Ինչքան մեր հասարակութիւնը տեղեկ լինի Մարտի 1-ի գործի մասնամասններին, այնքան փոքրանում է հաւանականութիւնը, որ այն Քոչարեանի թիմի կողմից կ'օգտագործուի՝ հասարակական կարծիքը բեւեռացնելու եւ հակալեզափոխական ռեւանշ նախապատրաստելու համար, նաեւ՝ ինֆորմացիայի հասանելիութիւնն աւելի աղեկվատ միջազգային ֆոն կը ստեղծի Հայաստանի շուրջ՝ նոր ռիսկեր չծնելով երկրի անվտանգութեան համար:

Թափանցիկ աշխատանքը միշտ մեծացնում է գործընթացի, տուեալ դէպքում՝ նախաքննութեան նկատմամբ վստահութիւնը, դրա լեգիտիմութիւնը: Ռոբերտ Քոչարեանի մեղաւորութիւնը կասկած չի յարուցում, սակայն շատ կարեւոր է, որ նա պատասխանատուութեան ենթարկուի բացարձակապէս օրինական ու որակեալ քննութեան արդիւնքում: «Անմեղ» Քոչարեանի լեզնդը պէտք է փլուզուի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ԾԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՍԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵԱՏԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Թաղային ճեղհակուծիչները Չպետք է Ազդեն Ընտրությունների Վրայ».
Վալերի Օսիպեան

Ոստիկանությունների պետ Վալերի Օսիպեանը խորհրդակցություններում հրահանգներ է արձակում նախագահության և նախարարության անդամներին: Նա պահանջում է, որ ընտրությունների ժամանակ չկատարվեն ոչնչացիկ և չհարգարարություններ: Նա պահանջում է, որ ընտրությունների ժամանակ չկատարվեն ոչնչացիկ և չհարգարարություններ: Նա պահանջում է, որ ընտրությունների ժամանակ չկատարվեն ոչնչացիկ և չհարգարարություններ:



Ոստիկանության պետ Վալերի Օսիպեան

ներ ըլլան, ինչպես եւ այլ անճշտություններ՝ աւելցնելով, որ յառաջիկայ ընտրություններն օրինականության տեսանկյունից պետք է անսխալապես մակարդակ ունենան:

Վալերի Օսիպեանն ընդգծած է, որ համայնքային ոստիկաններուն պետք է ջանքերն նաեւ միւս ստորաբաժանումները: Ընտրացուցակները ճշգրիտ նպատակով բնակարանային ցուցակները պետք է համազգեստով ըլլայ եւ քաղաքացիներուն հետ որեւէ պարագայի շփուի բարեկիրթ ու յարգալից: Ոստիկանությունների պետը անդրադառնալով ընտրություններում կազմակերպման գործին մէջ ոստիկանության անխնայական մասնակցությունը, յստակ եւ վճարական դիրքորոշում յայտնած է, որ պիտի չհանդուրժէ ընտրական կեղծարարությունները որեւէ դրսևերում:

Ինչպես տեղեկացուցած են ՀՀ ոստիկանությունների հասարակայնության հետ կապերում եւ լրատուության վարչություններին, Վալերի Օսիպեանը նշած է, որ բաւական աշխատանք կայ ընելու: Ան յիշեցուցած է ոստիկանության անձնագրային եւ վիզաներում վարչությունների տարածած յայտարարությունները, որ որոշ քաղաքացիներ փոխելով բնակություն վայրի հասցէն՝ չեն ներկայացրած նոր բնակության վայրին մէջ հաշուառուելու համար: Արդիւնքով՝ կը մնան նախկին բնակության հասցէի հաշուառման մէջ, ինչը անհրաժեշտութիւն կ'առաջացնէ, որ ոստիկանության ծառայողներն այցելեն բնակարաններ եւ նման դէպքեր արձանագրելու պարագային յորդորեն սեփականատիրոջ դիմել անձնագրային ծառայություն՝ նախկին բնակիչին հաշուառումէն հանելու համար:

Ոստիկանությունների պետը շեշտած է, որ ընտրացուցակներուն մէջ պետք չէ մահացած մարդոց անունը:

«ՀՀ-ի եւ «Ծառուկեանի» Պատգամաւորների Միջնորդությունը Վերլուծելու Կարիք Ունի».
Փոխ վարչապետ Տիգրան Աւինեան

«Դաշնակցություն» եւ «Ծառուկեան» խմբակցություններում որոշ պատգամաւորներում կողմէ Ռ. Քոչարեանի խափանման միջոցը փոխելու հարցով միջնորդություններ ներկայացնելու գործողություններ վերլուծելու կարիք կայ: Կը կարծեմ՝ այդ վերլուծական գործընթացը կը բերէ նաեւ որոշակի եզրայանգումներու: Այս մասին «Ազատութիւն» ռատիոկայանի ռեդիո եթերին յայտարարած է փոխվարչապետ Տիգրան Աւինեանը:

««Դաշնակցություն» եւ «Ծառուկեան» խմբակցությունների որոշ պատգամաւորներ որոշել են, որ իրենք պետք է միջնորդեն, դա իրենց իրաւունքն է: Շատ հանգիստ եմ վերաբերուում, որովհետեւ դա նրանց իրաւունքն է: Այստեղ շատ կարեւոր մի փաստ պետք է արձանագրել, որ Յատուկ քննչական

ծառայությունները գործադիր մարմնից որեւէ հրահանգ չի ստանում, նա գործում է անկախ, ինչպէս նաեւ չի ստանում որեւէ հրահանգ առաջին ատենի ատենի դատարանը», - նշած է փոխվարչապետը:

Տիգրան Աւինեանի խօսքով՝ դաշնակից գործընկերներու՝ «Դաշնակցություն» եւ «Ծառուկեան» դաշինքի հետ փոխյարաբերություններում ճշգրտման անհրաժեշտություն կայ:

Յիշեցնենք, որ Ազգային ժողովի 46 պատգամաւոր ստորագրած էր ՀՀ 2-րդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի խափանման միջոցը փոխելու եւ կալանքէն ազատ արձակելու միջնորդություն տակ: Պահանջին միացած են նաեւ «Դաշնակցություն» 3 եւ «Ծառուկեան» խմբակցությունների 1 պատգամաւորներ:

«Վերջապէս Մայրաքաղաքը Պետք է Ունենայ Կին Քաղաքապետ».
Նաիրա Զօհրապեան

Եթէ Երեւանի աւագանիի ընտրություններուն մէջ որակական փոփոխություններ չըլլայ, այդ մէկը ամենածանր հարուածը կ'ըլլայ՝ լուսաւոր յեղափոխութեան: Այս մասին լրագրողներուն հետ զրոյցի ժամանակ յայտարարած է Նաիրա Զօհրապեանը:

«Մայրաքաղաքը վերջապէս պետք է ունենայ կին քաղաքապետ: Որոշումը եղել է մեր քաղաքական թիմինը, որը բաց եւ հրապարակային է եղել: Դա ինձ համար մեծ պատասխանատուութիւն է: Ես ան-

լու եմ առաւելագոյնը եւ անհարը իմ քաղաքական թիմի եւ երեւանցիների յոյսերն արդարացնելու համար», - ըսած է Նաիրա Զօհրապեանը՝ աւելցնելով, որ իր ծրագրերը պիտի ներկայացնէ յառաջիկային: Կուսակցությունները կարգախօսի վերաբերեալ դեռ վերջնական որոշում չունի, սակայն թեկնածուներ կ'առաջարկէ հետեւեալ տարբերակը՝ «Ապրելու քաղաք Երեւան»:
«Այս կարգախօսը դեռեւս քննարկման փուլում է, սա իմ մօտեցումն է: Մենք պիտի գնանք նոր

Հնչակեան Կուսակցությունը Պիտի Մասնակցի Երեւանի Աւագանիի Ընտրություններում

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչություններն արձանագրելով, որ քաղաքական իրավիճակի փոփոխութեան արդիւնքում վերականգնուել է Հայաստանի քաղաքացու ընտրելու եւ ընտրուելու ազատութիւնը, ստեղծուել է գաղափարների մրցակցութեան հնարաւորութիւն, որոշում է կայացրել մասնակցել առաջիկայում կայանալիք Երեւանի աւագանու ընտրություններին:
Կուսակցությունների վարչությունները բանակցություններ է սկսում հնարաւոր դաշնակից քաղաքական ուժերի հետ, միաժամանակ ունենալով ընտրություններին միայնակ մասնակցելու եւ սեփական քաղաքապետի թեկնածու առաջադրելու տարբերակ:
ՍԴՀԿ Հայաստանի վարչություն

Օգոստոս 17-ին Նիկոլ Փաշինեան Պիտի Ամփոփել Վարչապետութեան իր 100-րդ Օրը

«Լրանում է իմ վարչապետ ընտրուելու 100 օրը, եւ ես առաջարկում եմ, որ մենք Օգոստոսի 17-ին՝ 18:30-ին՝ Հանրապետություն հրապարակում մեծ հանրահաւաք հրաւիրենք: Այս մասին յայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Զգիտեմ՝ դուք ինչպէս, բայց ես Ձեզ շատ եմ կարօտել, ուզում եմ, որ մենք նորից շփուելու հնարաւորութիւն ունենանք», - ըսաւ ան՝ աւելցնելով, որ բացի այդ, կ'ուզէ հանրահաւաքի միջոցով կարեւոր խօսակցություն ունենալ այն մասին, թէ Հայաստանի Հանրապետությունում մէջ ինչ տեղի ունեցած է վերջին 100 օրուան ընթացքին, եւ ինչ տեղի պիտի ունենայ յետոյ, «ինչ քայլեր է ձեռնարկել կառավարությունը Հայաստանում թուիչ քաձեւ գարգացում ապահովելու համար, եւ կոնկրետ ինչ քայլերով ենք մենք պատրաստուում առաջիկայում այդ գարգացումն ապահովել, ինչ գարգացումներ, ինչ մարտահրաւէրներ կան, եւ ինչպէս ենք մենք կարողանալու այդ ամէնի հետ գործ ունենալ, այդ բոլոր հնարաւորություններն օգտագործել, մարտահրաւէրները կառավարել, եւ

ընդհանրապէս խօսել այսօրուայ Հայաստանի, երեկուայ եւ վաղուայ Հայաստանի մասին»:

Նիկոլ Փաշինեանի խօսքով՝ հանրահաւաքը չափազանց կարեւոր իրադարձություն է: Ան նշեց, որ կը կարծէ՝ իւրաքանչիւրի մասնակցությունը շատ կարեւոր է՝ ապագայի կայուն հիմքերը դնելու համար, եւ արդէն գործնական գետնի վրայ ՀՀ-ի գարգացման մեկնարկը տալու համար եւ այն խնդիրներու մասին խօսելու համար, որուն այս ընթացքին ՀՀ նոր կառավարությունը բախուեր է:

«Ուրախ եմ, որ Ձեզ հետ հանդիպելու հնարաւորութիւն է լինելու այն հրապարակում, որտեղ միասին իրականացրինք սիրոյ եւ համերաշխութեան յեղափոխությունը», - ըսաւ ան՝ բոլորին 17 Օգոստոսին կրկին հրաւիրելով Հանրապետություն հրապարակ, «հանդիպման ֆորմալ առիթը իմ ընտրուելու հարիւր օրն է, իսկ ընդհանուր առմամբ մեր խօսակցությունները լինելու է մեր երկրի այսօրը եւ վաղուայ ապագան, որը կարծում եմ՝ չէք կասկածում, որ լինելու է փառաւոր եւ յաղթական», - եզրափակած է Փաշինեան:

ՄԴ Նախկին Անդամ Վալերի Պողոսեան Կը Պնդէ Ցուցմունք Չէ Տուած Արմէն Գեորգեանի Կողմէն Ծնշման Ենթարկուելու Վերաբերեալ

Սահմանադրական դատարանի նախկին անդամ Վալերի Պողոսեանը պնդած է, որ ցուցմունք չէ տուած այն մասին, թէ նախկին փոխվարչապետ Արմէն Գեորգեանը ճշում գործադրած է իր կամ իր եղբօր նկատմամբ՝ 2008 թուականին նախագահական ընտրություններում վերաբերեալ բարձրագոյն դատարանին ներս Սերժ Սարգսեանին ձեռնադրուող կայացնելու համար:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ժամանակ Վալերի Պողոսեանը յայտարարած է, որ ինքը որոշ փաստեր ներկայացուցած է:

Անդրադառնալով Յատուկ քննչական ծառայությունների պետ Սասուն Խաչատրեանի յայտարարություններին, թէ ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի աշխատակազմի ղեկավար Արմէն Գեորգեանը ճշում գործադրած է Սահմանադրական դատարանի դատաւորին վրայ, ան ըսած է. «Ես այդպիսի բան չեմ ասել, ես իրենց ասել եմ որոշ փաստեր, որոնք իրենք ներկայացնում են որպէս ճշում, դա իրենց գործն է:



Սահմանադրական դատարանի նախկին անդամ Վալերի Պողոսեան

Ձեմ ասում՝ եղել է կամ չի եղել, ես ներկայացրել եմ փաստը, դա մեկնաբանություն է, մնացածը ուրիշ է՝ ես կարող եմ մեկնաբանել այսպէս կամ այնպէս»:

Յիշեցնենք, որ Արմէն Գեորգեանը 2008-ին կը զբաղեցնէր երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի աշխատակազմի ղեկավարի պաշտօնը, այդ տարիներուն նախագահականին ներս կ'աշխատէր նաեւ Վալերի Պողոսեանի եղբայրը:

որակի ընտրություններ, որտեղ չպիտի լինի ատելություն ու թշնամանք: Ես կ'ուզեմ այն, որ կին թեկնածուներով միասին մի քանի քարոզարշաւի մասնակցէինք նոյն տեղում նոյն օրը

օղի աղտոտուածությունների հետ կապուած խօսէինք, որ երեւանցիներ տեսնի՝ կանայք ոչ թէ հակառակորդներ են, այլ համախոհներ, մրցակիցներ», - ընդգծած է Զոհրապեանը:

ԼՈՒՐԵՐ

Մահացած է Միսաք Մանուշեանի Յերոսական խումբի Վերջին Անդամ՝ Արսէն Չաքրեանը



Դիմադրական հերոսական խումբի վերջին անդամ՝ Արսէն Չաքրեան

Կիրակի, Օգոստոս 5-ին, Փարիզի մէջ, 101 տարեկան հասակին վախճանած է Ֆրանսայի գրաւման տարիներուն Ֆաշիստական Գերմանիոյ դէմ Միսաք Մանուշեանի գլխաւորած դիմադրական հերոսական խումբի վերջին անդամ՝ Արսէն Չաքրեանը:

Ֆրանսայի քաղաքական շրջանակները, եւ առաջին հերթին՝ նախագահ Էմանուէլ Մաքրոնը, իրենց յուզումն արտայայտած են Արսէն Չաքրեանի մահուան առթիւ եւ յարգանքի տուրք մատուցած անոր անցած ուղիին՝ ուղի մը, որ, ինչպէս նշած է Մաքրոնը Թուրքիոյ իր էջով, «դիմադրականի անցեալն կ'երկարի դէպի յիշողութեան պահպանման աշխատանք»: «Արսէն Չաքրեանը հանդիսացաւ Դիմադրութեան շարժման հերոս եւ անխոնջ վկայ մը, որուն ձայնը ուժգին հնչեց մինչեւ վերջը», - գրած է Ֆրանսայի նախագահը:

Յարգանքի ու մեծարանքի յայտարարութիւններով հանդէս եկած

են քաղաքական շարք մը գործիչներ:

«Համեստ եւ խոնարհ՝ Արսէն Չաքրեանը իրականութեան մէջ մեծ էր, եւ Համայնավար (Կոմունիստական) կուսակցութիւնը հպարտ է, որ ան եղած է իր շարքերէն ներս», - Թուրքիոյ իր էջով վրայ գրած է Ֆրանսայի քոմկուսի գլխաւոր քարտուղար Փիեռ Լորանը:

Իսկ ընկերավարական պատգամաւոր Լիուք Քարվոնասի համար Արսէն Չաքրեանը Դիմադրութեան շարժման խորհրդանիշ է, օրինակ՝ ապագայ սերունդներուն համար:

Արսէն Չաքրեանը անդադար պայքարած է Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ հայ ժողովուրդի իրաւունքներուն համար: Իր կեանքին վերջին տասնամեակներուն ընթացքին ան դպրոցներուն մէջ իր վկայութիւնները կը պատմէր նացիստական գրաւման ժամանակաշրջանի եւ Դիմադրութեան շարժման վերաբերեալ՝ միաժամանակ չղաղրելով պայքարիլ Հայոց ցեղասպանութեան ճանաչման համար:

Մնացականեան. Հայկական Կողմին Համար Արցախի Կարգավիճակն ու Անվտանգութիւնը Առաջնահերթութիւն Են

Հայաստանի արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանը երէկ Երեւանի մէջ հանդիպած է Իտալիոյ արտաքին գործոց նախարար Էնջո Միլանէզիի հետ: Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութիւնը կը հաղորդէ, որ անոնք անդրադարձած են նաեւ տարածաշրջանային շարք մը խնդիրներու:

Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, Զօհրապ Մնացականեանը վերահաստատած է Հայաստանի յանձնառութիւնը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ձեւաչափին մէջ դարաբաղեան հակամարտութեան բացա-

ռապէս խաղաղ կարգաւորման՝ ընդգծելով, որ հայկական կողմի համար բանակցային գործընթացին մէջ առաջնահերթութիւններն են Արցախի կարգավիճակը եւ անվտանգութիւնը: Նախարար Մնացականեանի խօսքով՝ Ատրպէյճանի կողմէն շարունակաբար հնչող ռազմական հռետորաբանութիւնը եւ հայատեացութեան սերմանումն ուղղուած են խաղաղութեան հաստատման ուղղութեամբ ջանքերու տապալման:

Հայաստանի եւ Իտալիոյ Արտաքին գործոց նախարարութեան ղեկավարները կարեւորած են բանակցային գործընթացի առաջնորդման համար խաղաղութեան նպաստող միջնորդի ձեւաւորումը:

Քոչարեանը Կալանքի Տակ Պահելը

Շարունակուած էջ 1-էն

րաւումը քաղաքական գործընթացներում արգելուած է ինչպէս նախկին, այնպէս էլ Սահմանադրութեան ներկայիս խմբագրմամբ: Բանակի, զինուած ուժերի ներգրաւումը կարող էր լինել միայն այն դէպքում, երբ յայտարարուած լինէր ռազմական դրութիւն: Ինչպէս գիտէք՝ ռազմական դրութիւն յայտարարուած չի եղել»:

«Ես պաշտօնապէս յատարարում եմ, որ մեր որոշման մէջ նման դրոյթ չկայ, մենք կասկածի տակ չենք դրել ընտրութիւնների արդիւնքները, մենք ընդամենը նշել ենք, որ «այն քաղաքացիները, որոնք ընտրութիւնների արդիւնքները համարել են կեղծուած, դուրս են եկել փողոց իրենց իրաւունքները վերականգնելու համար»... այսօր քան», - պարզաբանած է Սասուն խաչատրեանը:

Ռուսաստանի Պաշտպանութեան Փոխնախարար Հայաստանին Յատկացուած 100 Միլիոնի Տոլարի Սպառազինութեան Վարկը Ընթացքի Մէջ Է

Ռազմաթեւնիքական համագործակցութեան գիծով Ռուսաստանի պաշտպանութեան փոխնախարար Ալեքսանտր Ֆոմինը հերքած է ռուսաստանեան «Քոմերսանթ» պարբերականի հրապարակումը այն մասին, թէ Հայաստանին յատկացուած ռուսաստանեան հարկը միլիոն տոլար ռազմական վարկի իրականացումը «մեծ հարցականի տակ է»:

«Այդ մէկը ոչ ստույգ տեղեկութիւն է, ես այն չեմ հաստատեր», - ըսած է ռուս գորավարը՝ պատասխանելով «Ազատութեան» հարցին: «Իսկ վարկի մասով Դուք ինչ տեղեկատուութիւն ունիք», հարցին ան արձագանգած է. -

«Ամէն ինչ կ'աշխատի»:

Նախօրէին ռուսաստանեան պարբերականը ծաւալուն յօդուած հրապարակած էր, որուն մէջ մասնաւորապէս կը պնդէր, թէ պաշտօնական Մոսկուան վրդոված է Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի կալանաւորման եւ յատկապէս Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղար Եւրի խաչատրուովին մեղադրանքի առաջադրման կապակցութեամբ, եւ այդ պատճառով հարցականի տակ է 100 միլիոն տոլարի վարկի շրջանակէն ներս նախատեսուած ռուսական նոր սպառազինութեան մատակարարումը Հայաստանին:

Ուաշինկթըն-Անգարա Դիւանագիտական Գոնաժամը Սրընթաց կը Խորանայ



Ուաշինկթընի եւ Անգարայի միջեւ անցած շաբթուան սկսած դիւանագիտական ճգնաժամը օրէ օր կը խորանայ, ինչի արդիւնքով թրքական լիբան հերթական անկում արձանագրած է՝ հասնելով սոլարի նկատմամբ պատմութեան մէջ ամենացած ցուցանիշին: Այս ըստ էութեան, սակարաններու արձագանգն է Ուաշինկթընէն հնչող վերջին յայտարարութիւններուն, ըստ որոնց՝ թրքական ընկերութիւններն յառաջիկային կրնան կորսնցնել առանց մաքսատուրքերու ամբերիկեան շուկայ մտնելու արտօնութիւնը:

Անցեալ շաբաթ, Սպիտակ տունը պատժամիջոցներ սահմանած էր երկու թուրք նախարարներու նկատմամբ՝ սառեցնելով անոնց հաշիւները ԱՄՆ տարածքին: Փորձագէտները, սակայն, յայտնած են, որ թուրք պաշտօնեաներու դէմ պատժամիջոցները աւելի շատ խորհրդանշական բնոյթ ունէին, մինչդեռ թրքական ապրանքները, այսպէս կոչուած՝ Duty free ռեժիմէն ազատելը կրնայ իսկապէս ցաւազին ըլլալ Անգարայի համար:

Էրտողան իր հերթին սպառնացած էր, թէ ԱՄՆ-ն կրնայ կորսնցնել Անգարայի նման վստահելի ու հաւատարիմ դաշնակից:

Նախօրէին էրտողանի վարչակազմը խօսքէն գործի անցաւ՝ պատժամիջոցներ սահմանելով ԱՄՆ-ի նկատմամբ: «Այժմ ես կը յանձնարարեմ իմ գործընկերներու՝ սառեցնել Միացեալ Նահանգներու ներքին գործերու ու արդարադատութեան նախարարներու՝ թուրքիոյ մէջ ունեցած հաշիւներն ու կալանք դնել անոնց ունեցած սեփականութեան վրայ», -


ըսած է էրտողան:

Մինչ այդ, արեւմտեան լրատուամիջոցները որոշ մանրամասներ հրապարակած են Անգարայի եւ Ուաշինկթընի միջեւ այս հարցի շուրջ ամիսներ շարունակուած գաղտնի բանակցութիւններուն մասին: Bloomberg գործակալութիւնը կը պնդէ, թէ կողմերը շատ մօտ եղած են համաձայնութեան, եւ Անգարան պատրաստ եղած է ազատ արձակել պատուելի Պրանսընին, պայմանաւ, որ Ուաշինկթըն թող տայ թրքական պետական Halkbank -ի նախկին գործադիր տնօրէն Հաքան Աթիլլային ամբերիկեան բանտէն տեղափոխել թուրքիա եւ հայրենիքին մէջ կրել պատժի մնացած մասը: Վերջինս ամիսներ առաջ նիւեորքեան դատարանին կողմէն երկու քուկէս տարուան ազատագրկման դատապարտուած է՝ Իրանի նկատմամբ ամբերիկեան պատժամիջոցները շրջանցելու համար:

Bloomberg-ի աղբիւրները նշած են, թէ Ուաշինկթընը համաձայնած է այդ պահանջին, սակայն գործարքն ի վերջոյ չէ կայացած, քանի որ Անգարան վերջին պահուանաւ թաղանթի վերջին քուկէս տարուան յետագային որեւէ քրէական հետապնդում պիտի չիրականացնէ Halkbank-ի նկատմամբ:

«Եթէ այդ յաջողէր, էրտողանը իրապէս յաղթող դուրս կու գար բանակցութիւններէն: Բայց անոր փոխարին ան յայտնուեցաւ թրամփի ցասման թիրախ», - DW-ին ըսած է Նահանգներուն մէջ գործող վերլուծական կեդրոններէն մէկուն փորձագէտ Մերվէ Թահիրօղլուն:

Ձեկոյց. Թրքական Մամուլին Մէջ Յայերն Ամէնէն Յաճախ Թիրախաւորուող Ցեղային Խումբերէն Են



Պոլսոյ մէջ գործող Հրանդ Տինքի հիմնադրամը հրապարակած է տարբեր ցեղային եւ կրօնական խումբերու դէմ թրքական մամուլին մէջ ատելութեան դրսեւորումներու վերլուծութեան նուիրուած իր հերթական գեկոյցը: Ըստ այդմ՝ 2018-ի Յունուար-Ապրիլ ամիսներուն թրքական մամուլին մէջ 76 տարբեր խումբերու նկատմամբ ատելութիւն ու թշնամանք պարունակող 3076 յայտարարութիւն արձանագրուած է: Նշուած ժամանակահատուածին հրապարակուած է ցեղային եւ կրօնական խումբեր թիրախաւորող 2265 յօդուած եւ լուր: Թրքական լրատուամիջոցներու թիրախ ամէնէն յաճախ յայտնուած են հայերը, յոյները եւ հրեաները:

Նշուած չորս ամիսներուն ընթացքին թրքական մամուլին մէջ հայերը հիմնական՝
- Թիրախաւորուած են հայ-ատրպէյճանական հակամարտութեան վերաբերեալ հրապարակումներուն մէջ,
- Պիտակաւորուած են որպէս բռնութիւններու հակուած ցեղախումբ,
- Մեղադրուած են Թուրքիոյ համար «թշնամի» հռչակուած խումբերուն կամ անհատներուն թիկունքէն աջակցութիւն ցուցաբերելու մէջ,
- Հայկական ԱՍԱԼԱ-ն յիշատակուած է Թուրքիոյ մէջ ահաբեկչական խմբաւորում համարուող «Քիւրտիստանի բանուորական կուսակցութեան» (PKK) հետ համատեղ՝ որպէս ահաբեկչութեան աղբիւր:

Փայլան. «Թոյլ Չեն Տար, որ Մեր Պատրիարքը Ընտրենք, Բայց «Ազատ» Կ'ապրինք»

Թուրքիոյ կրօնական փոքրամասնութիւններու առաջնորդները եւ ներկայացուցիչները յայտարարութիւն տարածած են՝ հերքելով Թուրքիոյ մէջ այլ կրօն դաւանողներու նկատմամբ ճնշումներու մասին լուրերը: Յայտարարութեան մէջ նշուած է, որ անցեալին եղած դժուարութիւնները ժամանակի ընթացքին լուծուած են: «Պետական հաստատութիւններու հետ մշտական խորհրդակցութիւններ կը կատարենք այն խնդիրներու շուրջ, որոնք կ'ուզենք լուծել», - նշուած է յայտարարութեան մէջ: Հայ համայնքի ներկայացուցիչներէն յայտարարութեան տակ ստորագրած են Պոլսոյ հայոց պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշեանը, Հայ կաթողիկէ եկեղեցւոյ առաջնորդ Լեւոն Զէքիեանը կէտիկիաչայի հայ բողոքական եկեղեցւոյ եւ դպրոցի հիմնադրամի հոգեւոր ղեկավար հովիւ Գրիգոր Աղապալօղլուն, Սուրբ Փրկիչ հայկական հիւանդանոցի հիմնադրամի նախագահ Պետրոս Շիրինօղլուն, Ս. Յակոբ հայ կաթողիկէ հիւանդանոցի հիմնադրամի նախագահ Պերնարտ Սարըպալը: Ստորագրողներու շարքին եղած են նաեւ Յոյն ուղղափառ եկեղեցւոյ պատրիարք Բարթողիմէոս Առաջինը, Թուրքիոյ րաբունապետ Իսակ Հալեւան: Յայտարարութիւնը մեկնաբանած է Թուրքիոյ խորհրդարանի պոլսասահայ պատգամաւոր Կարօ Փայլանը: Ան «Twitter»-ի մէջ հետեւեալ



գրառումը կատարած է. «Չեն ձգեր, որ մեր պատրիարքը ընտրենք, չեն ձգեր, որ հոգեւոր դպրոցը բանանք, թոյլ չեն տար, որ եկեղեցւոյ հիմնադրամներու ղեկավարներու ընտրութիւններ իրականացնենք, մնացած բոլոր մը համայնքն ալ աղանդի պէս երկչոտ է, բայց «ազատ կ'ապրինք»: Այս յայտարարութիւնն անգամ ապացոյց է, որ ազատ չենք»:
Նշենք, որ ըստ «Ալօս» շաբաթաթերթի՝ համատեղ յայտարարութիւնը կապուած է Թուրքիոյ մէջ կալանաւորուած ամերիկացի հոգեւորական Էնտրիոլ Պրանսընի դատական գործի վերաբերեալ ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի յայտարարութիւններուն հետ: Վերջինը ըսած էր, որ Թուրքիոյ կառավարութիւնը Պրանսընի դէմ մեղադրականին մէջ անոր մեղադրած է երկիրը պառակտելու մէջ, քանի որ Պրանսընն այնտեղ քրիստոնէական հաւատք կը տարածէ:

Արաբական Աշխարհ Սեուտական Արաբիա եւ Գանատա Վատթար Յարաբերութեան Մէջ

Միջազգային Հանրային կարծիքը վերջերս նոր անակնկալի մը առջեւ դէմ հանդիման գտնուեցաւ, երբ անակնկալօրէն Սէուտական Արաբիան պատժամիջոցներու դիմեց Գանատայի դէմ: Արդարեւ, Օթթաուայի (Գանատա) իշխանութիւնները Սէուտական Արաբիոյ պատկան մարմիններուն յորդորած էին ազատ արձակել մարդկային իրաւունքներու գործունեայ պաշտպանները, որոնք շրջանէ մը ի վեր բանտարկուած կը մնան: Անմիջական հակազդեցութիւնն այն եղաւ որ Սէուտական Արաբիան Գանատայի դեսպանը վտարեց իր երկրէն եւ Գանատայի հետ կնքուած առեւտրական համաձայնագրերն ու ներդրումները կասեցուց: Միեւնոյն ատեն Ռիատի իշխանութիւնները Գանատային ետ կանչեցին Սէուտական Արաբիոյ իրենց դեսպանը:
Յայտնի է թէ այս նոր պատժամիջոցը որքանով պիտի ազդէ սէուտականատական յարաբերութիւններուն վրայ, երբ նկատի ունենանք որ ցարդ 4 պիլիոն տոլարի առեւտրական գործակցութիւն մը առկայ է երկու երկիրներու միջեւ, առանց հաշուելու պաշտպանութեան ոլորտի պայմանագիրը, որ կը հաշուէ 13 պիլիոն տոլար:

Երկու Եւրոպացիներ Ցկեանս Դատապարտուեցան Իրաքի մէջ

Պաղատէն ստացուած լուրերու համաձայն Իրաքի դատարանը ցկեանս բանտարկութեան դատապարտեց ֆրանսացի այլ մարդ մը եւ գերմանացի կին մը: Անոնք ամբաստանուած էին իսլամական պետութիւն կազմակերպութեան ժիհատիսթներու խմբակցութեան անդամակցութեան համար:
Պաղատի կեդրոնական ոճրագատ ստեանի կողմէ դատապարտուած ֆրանսացի կը կոչուի Լասէն Կէպոչ (58 տարեկան): Իսկ գերմանուհին համար տրուած է միայն Նատիա անունը, որուն դատապարտութիւնը կատարուած է առանձին: Արդարեւ Նատիան դուստրն է գերմանուհիի մը, որ անցեալ Յունուարին, մահուան դատապարտուած էր միեւնոյն մեղադրանքով, բայց յետոյ վերատեսուութեան ենթարկուելով վճիռը վերածուած էր քսան տարուան ազատազրկումի:

Սուրիացի Գաղթականներ Սկսած Են Տուն Վերադառնալ

Լիբանան եւ Թուրքիա ապաստանած բազմահազար սուրիացի գաղթականներ սկսած են տուն վերադառնալ, օժանդակութեամբ ռուսական բանակի փոխադրականներուն: Նշենք նաեւ որ աւելի քան 1 միլիոն սուրիացի ապաստան կը բնակին Լիբանանի մէջ իսկ 3 միլիոն գաղթականներ Թուրքիոյ մէջ:
Միեւնոյն ժամանակ երկրէն ներս տեղափոխութիւններ տեղի կ'ունենան իրենց բնակարաններէն ապահով վայրեր տեղահանուածներու միջեւ: Զգալի տեղաշարժ կատարուած է Տէրապի շրջանին մէջ, ուր հակակառավարական ոյժերու զգալի համախմբում մը կար: Այստեղ ապաստամբ ոյժերը անձնատուր եղած են օրինական իշխանութիւններուն դէմ եօթ տարուած կատաղի պայքարներէն ետք:

ՄԴՅ Պատուիրակութեան Հանդիպումը

Շարունակուած էր 1-էն
տատեց որ ինք պատրաստ է գործակցելու համայնքի անխտիր բոլոր կազմակերպութիւններուն ու նաեւ անկախ գործիչներուն հետ, յանուն Հայաստան-սփիւռք կապերու ամրապնդման: Նախարարը յայտնեց որ ինք պատրաստ է լսելու բոլոր առաջարկները, որպէսզի փոխադրած յարաբերութիւններուն հաղորդուի նոր որակ:
Հնչակեան պատուիրակութեան անդամները նախարարին փոխանցեցին իրենց կարգ մը մտահոգութիւնները, կապուած յատկապէս Հայաստան Համահայկական Հիմնադրամի Լոս Անճելոսի գրասենեակի գործունէութեան եւ գլխաւոր Հիւսպտոսի բացակայութեան մասին:
ՄԴՅ պատուիրակութեան մաս կը կազմէին Վարիչ Մարմինի անդամներ եւ կուսակցութեան հովանաւորութեան տակ գործող տարբեր միաւորներու պատասխանատուներ:
Սփիւռքի Նախարար Սիւիթար Հայրապետեանի Այցը Լոս Անճելոս
Հայաստանի Սփիւռքի նախարար Միւիթար Հայրապետեան վերջերս պաշտօնական այցելութեամբ Լոս Անճելոս գտնուեցաւ: Այս առթիւ ան ունեցաւ շահեկան հանդիպումներ ժողովրդային լայն շրջանակներու եւ ազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ: Իր ունեցած տեսակցութիւններն ու հրապարակային ելոյթները մեծ խանդավառութիւն ստեղծեցին գաղութէն ներս:
Իր հանդիպումներու ծիրէն ներս ան տեսակցութիւններ ունեցաւ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Վարիչ Մարմինի, ինչպէս նաեւ ՌԱԿ-ի, ՀՅԴ-ի, Իրանահայ Միութեան եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներուն հետ:
Յատկանշական էր Կլեմէնտիլի քաղաքապետարանի կազմակերպած հանրահաւաքը, որուն ներկայ էր շուրջ 600 հոգի: Այստեղ Սփիւռքի երիտասարդ նախարար Միւիթար Հայրապետեան իր ելոյթին մէջ ազգային միասնութեան կոչ ուղղեց. «Ինքնամոռաց նուիրուել, Հայաստանի, Արցախի, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու զարգացման սուրբ գործին»:
Կիպրոսէն Գալիֆոթրիա ժամանած սփիւռքի նախարարն այնուհետեւ մեկնեցաւ ԱՄՆ-ի Արեւելեան նահանգները, հոն եւս ծանօթացման հանդիպումներ ունենալու տեղուն հայ գաղութի ներկայացուցիչներուն հետ:
Բարի երթ եւ արդիւնաշատ գործունէութիւն խոստմնալի նախարարին:

Գերմանական «Deutsche Welle» - Իսկ ինչու՞ էր լռում Լաւրովը 2008թ. Մարտի 1-ից Յետոյ



Սերգեյ Լաւրովը (իսկ իրականում Վլադիմիր Փուժինը) սուր քննադատեց դաշնակից Հայաստանի կառավարութեանը: Ռուսաստանի արտգործնախարարի ցատումն էր առաջացրել Հայաստանի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանի կալանաւորումը, որը մեղադրում է սահմանադրական կարգի տապալման մէջ, ինչպէս նաեւ նախկին պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեանի (նա այժմ գտնուում է հետախուզման մէջ) եւ Հայաստանի նախկին գլխաւոր շտաբի պետ, այժմ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար գեներալ-գնդապետ Յուրի Նաչատուրովի դէմ գործ բացելու հանգամանքը, գերմանական Deutsche Welle պարբերականում գրում է ռուս լրագրող Կոնստանտին Էգերտը:

Նաչատուրովին գրաւի դիմաց ազատ են արձակել: Բայց միայն քրէական հետապնդման փաստը ՀԱՊԿ նոմինալ ղեկավարի դէմ Մոսկուայում ցասման նոպայի տեղիք է տուել: Լաւրովի յայտարարութիւնը դրանում կասկած չի թողնում: «Այնտեղ տեղի ունեցողը չի կարող մեզ չանհանգստացնել, այդ թւում ԱՊՀ տարածութիւնում կազմակերպութիւնների բնականոն աշխատանքի տեսանկիւնից», - ասել է նա: Նախարարը քննադատութեան է ենթարկել նոր վարչապետ Նիկոլ Փաշինեանի կառավարութեանը քաղաքական հակաակորդներին չհետապնդելու պայմանաւորուածութիւնը խախտելու համար:

Լաւրովը Հայաստանի իշխանութիւններին կոչ է արել ամբարապնդել «ազգային միասնութիւնը» եւ «կայունութիւնը»: Նոյն Լաւրովը սակայն, մտահոգութիւն չէր յայտնում, երբ 2008թ. Մարտին նախագահ Քոչարեանին հաւատարիմ ոստիկանութիւնը եւ զինուորականները ցրեցին ընդդիմութեան ցոյցը Երեւանում: Նրանք սպանեցին մի քանի ցուցարարներ, իսկ մի քանի յայտնի ընդդիմադիրներ յայտնուեցին բանտում: Նրանց թւում էր նաեւ Նիկոլ Փաշինեանը: Քոչարեանի եւ Սարգսեանի կողմից ընդդիմութեան հետապնդման մասին ոչ մի բողոք ո՛չ Կրեմլը, ո՛չ Սմոլենսկի հրապարակը տասը տարի առաջ չարտայայտեցին, գրում է յօդուածի հեղինակը:

Այսօր Հայաստանն աւելի քան 20 տարի ղեկավարող «ղարբաղեան կլանի» համար եկել է հաշուեյարդարի ժամը: Արդեօք Փաշինեանի գործողութիւններում անձնական վրէժխնդրութեան տարր

կա՞: Հաւանաբար այդ Արդեօք Քոչարեանին եւ գեներալներին քրէական հետապնդման համար իրական պատճառ կա՞: Անկասկած: 2008թ. նախագահական ընտրութիւնները, որոնց արդիւնքում ակնյայտօրէն առաջ մղեցին Սերժ Սարգսեանին, եւ դրանց յաջորդած ցոյցերը միանշանակ քննութեան

արժանի են: Արդեօք այն անաչառ կը լինի՞: Դժուար է ասել, բայց առանց առաւելագոյն հանրային հնչեղութեան՝ Հայաստանում դարի այդ գործընթացը այլ կերպ հնարաւոր չէ անցկացնել:

Քոչարեանն ու Սարգսեանը բազմաթիւ համակիրներ ունեն, կայ խմբակցութիւն խորհրդարանում, կան համախոհներ ՁԼՄ-ներում: Լսումները կը դառնան կարեւոր քննութիւն հայկական ժողովրդավարութեան համար՝ սկսած 1991թ. անկախութիւն ձեռք բերելուց: Այդ ոգով է արտայայտուել ԱՄՆ պետքարտուղարութիւնը: Այնտեղ յիշեցրել են, որ միշտ կոչ են արել անկախ եւ անաչառ հետաքննութիւն անցկացնել 2008թ. իրողարձութիւնների վերաբերեալ, եւ յոյս են յայտնել, որ ամէն ինչ կ'ընթանայ «արդարադատութեան միջազգային չափանիշներին» համապատասխան:

Կրեմլը զայրացած է

Պաշտօնական Մոսկուան զայրացած է: Նախ, իր արբանեակները, թէկուզ եւ նախկին, դատական հետապնդման փաստն ինքնին ընկալում է որպէս քաղաքական մարտահրաւէր հայկական քաղաքականութեան մէջ Ռուսաստանի գերիշ-

խող դիրքորոշման նկատմամբ: Երկրորդ, դատական քննութիւնները միանգամայն կարող են քննարկումներ երեւան հանել 2008թ. ցոյցերը ճնշելու գործում Կրեմլի դերակատարութեան մասին: Հագիւ թէ Քոչարեանը լուի: Նրա համար պաշտպանական գծերից մեկը թերեւս կը լինի վկայակոչել Փուտինի կողմից ճնշումները: Երրորդ, Նիկոլ Փաշինեանի կառավարութեան կողմից ձեռնարկուած հակակոռուպցիոն արշաւը գնալով աւելի շատ է անհանգստացնում ռուսական պետութեանը:

Կրեմլի համար կոռուպցիան հետխորհրդային տարածութիւնում ազդեցութիւնը պահելու ամենազլխաւոր մեթոդներից մէկն է: Ինչպէս ժամանակին ցոյց տուեց Վրաստանի օրինակը՝ յանձնին Միխեիլ Սաակաշւիլի, ներքին քաղաքականութեան փոփոխութիւնը բաւականին արագ սկսում է ազդել, թէկուզ եւ ոչ ուղղակիօրէն, պետութեան արտաքին քաղաքական կողմնորոշման վրայ: Որքան մաքուր է բիւրոկրատիան, եւ թափանցիկ է կառավարումը, այնքան շատ են օտարերկրեայ ներգրումները, այնքան բազմազան են դառնում ար-

Շար.ը էջ 18

Կազմակերպութեաք՝ Նոր Մերունդ Մշակութային Միութեան



Հրապարակային Հանդիպում



Թաթուլ Յակոբեանի Հետ

ԱՆԻ կենտրոնի համակարգող եւ
Քաղաքական վերլուծաբան

ՀԱՅԱՍՏԱՆ

Թաւշեայ Յեղափոխութենէն Ետք

Ուրբաթ, Օգոստոս 24, 2018
ժամը 8-ին

Կլենտէլի Կեդրոնական Գրադարան

DOWNTOWN CENTRAL LIBRARY
222 East Harvard Street, Glendale, California

1998-2008. Ռոբերտ Քոչարեանի Արևնոտ Տասնամեակը

ՍՈՆԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մարտի 1-ի գործի շրջանակներում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանին առաջադրուած մեղադրանքից ու կալանաւորումից յետոյ նրա փաստաբաններն ու համախոհները չեն դադարում յայտարարել, թէ մեղադրանքն անհիմն է, նա կատարել է գործողութիւններ, որոնք բխել են իր լիազօրութիւնների շրջանակներից: Բայց ուշագրաւ է, որ Ռոբերտ Քոչարեանի պաշտօնավարման 10 տարուայ ընթացքում կատարուել են բազմաթիւ յանցագործութիւններ, որոնք միանշանակ չեն բխել իր լիազօրութիւններից, սակայն անմիջականօրէն կապուել են իր անուան հետ:

Մասնաւորապէս, 1998-2008 թուականներին տեղի են ունեցել առեղծոճածային մահեր, քաղաքական հետապնդումներ, միջադէպեր, մահափորձեր, պաշտօնեաների սպանութիւններ, հետապնդումներ տպագիր մամուլի ու ՁԼՄ-ների հանդէպ, քրէական եւ կիսաքրէական աղմկայարույց սպանութիւններ:

2008 թուականին «Ժամանակ Երեւան» օրաթերթի պատուէրով մի ուսումնասիրութիւն է կատարուել, որում ամբողջացուած են բոլոր նման դէպքերը: Եւ այսպէս՝

1998-2008 քաղաքական սպանութիւններ.

Հենրիկ Խաչատրեան. ՀՀ գլխ. դատախազ: Սպանուել է հրազէնից՝ իր աշխատասենեակում, 1998թ. Օգոստոսի 6-ին: Պաշտօնական վարկածով՝ նրան սպանել է ՀՀ տրանսպորտի նախկին դատախազ Արամ Կարապետեանը եւ ինքնասպան եղել:

Արամ Կարապետեան. ՀՀ տրանսպորտի նախկին դատախազ: Դէպքից մէկ ժամ անց Ռ. Քոչարեանը «բացայայտեց» յանցագործութիւնը, որի համաձայն՝ Արամ Կարապետեանը անձնական հրաձիգով սպանել է Գլխ. դատախազ Հենրիկ Խաչատրեանին եւ ինքնասպան եղել: Հենց այս «բացայայտումն» էլ յետագայում դարձաւ քննչական խմբի հիմնական վարկածը, եւ յանցագործութիւնը համարուեց բացայայտուած:

Վահրամ Խոռոխուռնի. ՀՀ պաշտպանութեան փոխնախարար, գնդապետ: Սպանուել է 1998 թուականի Դեկտեմբերի 10-ին՝ իր բնակարանի շքամուտքում, հրազէնից: Սպանութիւնը բացայայտուած չէ:

Արծրուն Մարգարեան. ՀՀ ՆԳ եւ ԱԱ փոխնախարար, գեներալ-մայոր: Սպանուել է 1999թ. Փետրուարի 9-ին: Պաշտօնական վարկածով՝ երկու կրակոցով ինքնասպանութիւն է գործել՝ մի անգամ կրակելով գլխին, մի անգամ՝ սրտի շրջանում:

Վազգէն Մարգարեան. ՀՀ վարչապետ: Սպանուել է 1999թ. Հոկտեմբերի 27-ին, Աժ դահլիճում՝ Նաիրի Յունանեանի յանձախմբի կողմից: Հոկտեմբերի 27-ի ահաբեկչութիւնը կազմակերպիչների մասով բացայայտուած չէ:

Կարեն Դեմիրճեան. Աժ նախագահ, Հայաստանի Ժողովրդական կուսակցութեան նախագահ: Սպանուել է 1999 թուականի Հոկտեմբերի 27-ին, Նաիրի Յունանեանի յանցախմբի կողմից:

Յուրի Բախչեան. Աժ փոխնախագահ: Սպանուել է 1999թ. Հոկտեմբերի 27-ին, Նաիրի Յունանեանի յանցախմբի կողմից:

Ռուբեն Միրոյեան. Աժ փոխնախագահ: Սպանուել է 1999թ. Դեկտեմբերի 27-ին, Նաիրի Յունանեանի յանցախմբի կողմից:

Լեոնարդ Պետրոսեան. ՀՀ օպերատիւ հարցերով նախարար: Սպանուել է 1999թ. Հոկտեմբերի 27-ին, Յունանեանի խմբի կողմից:

Արմենակ Արմենակեան. ՀՀ Աժ պատգամաւոր: Սպանուել է 1999թ. Հոկտեմբերի 27-ին: Սպանութիւնը բացայայտուած չէ:

Հենրիկ Աբրահամեան. Աժ պատգամաւոր: Սպանուել է 1999 թուականի Հոկտեմբերի 27-ին, Նաիրի Յունանեանի յանցախմբի կողմից:

Միքայէլ Քոթանեան. Աժ պատգամաւոր, ակադեմիկոս: Սպանուել է 1999թ. Հոկտեմբերի 27-ին, Յունանեանի խմբի կողմից:

Աժ նախագահ Արմէն Խաչատրեանի թիկնապահ Արբակ Բաբասեանը 2000թ.-ի Ապրիլի 4-ին, գիշերուայ 02:40-ի սահմաններում, Բաղրամեան եւ Կիւեւեան փողոցների խաչմերուկում ատրճանակով սպանեց 30-35 տարեկան մի քաղաքացու:

Գագիկ Պողոսեան. ՀՀ վարչապետի խորհրդական, վարչապետի վերահսկողական ծառայութեան պետ: Սպանուել է 2001թ. Սեպտեմբերի 11-ին, իր բնակարանի դռանը յարմարեցուած նռնակի պայթիւնի հետեւանքով: Սպանութիւնը բացայայտուած չէ:

Պողոս Պողոսեան. Վրաստանի քաղաքացի: Սպանուել է 2001թ.



Սեպտեմբերի 25-ին, «Առագաստ» սրճարանում՝ Քոչարեանի թիկնապահների կողմից ծեծուելու հետեւանքով՝ նախագահին «պրիւետ Ռոբ» արտայայտութեամբ ողջունելու համար:

Սպանութիւնից մի քանի օր հետո Ռ. Քոչարեանը յայտարարեց, որ եթէ Պողոս Պողոսեանը ողջ լինէր, ինքը դեռ ասելու բան կ'ունենար: Թիկնապահներից մէկը՝ Ա. Յարութիւնեանը՝ Կուկու մականուամբ, դատապարտուել է երկու տարուայ պայմանական ազատազրկման:

Տիգրան Նաղդալեան. լրագրող, Հանրային հեռուստառադիոխորհրդի նախագահ: Սպանուել է 2002 թուականի Դեկտեմբերի 28-ին, ծնողների տան շքամուտքում՝ հրազէնից:

1998-2008 պաշտօնեաների սպանութիւններ

Աշոտ Մխիթարեան. ՀՀ էլեկտրական ցանցերի «Արգնի» մասնաձեւրդի տնօրէն: 2005թ. Սեպտեմբերի 24-ին Նոր Հաճընի քաղաքապետ եւ Հոկտեմբերի 9-ին կայանալիք քաղաքապետի ընտրութիւններում թեկնածու Արմէն Քէշիշեանը երկու ոստիկանների ներկայութեամբ վեց կրակոց է արձակել եւ սպանել նրան: Քէշիշեանը դատապարտուեց ընդամէնը 3.5 տարուայ ազատազրկման եւ պայմանական ազատ արձակուեց:

Տիգրան Պետրոսեան. Արարատի մարզի Դալար գիւղի գիւղապետ: Սպանուել է 2006թ. Օգոստոսի 30-ին, նախկին գիւղապետ Գեղամ Բաբայեանի կողմից, որսորդական հրացանով:

Ռոլանդ Մկրտչեան. Արմաւիրի մարզի Նալբանդեան գիւղի գիւղապետ: 2006թ. Դեկտեմբերի 20-ի գիշերը անյայտ անձանց կողմից իր տանից դուրս է կանչուել եւ սպանուել:

Շահէն Յովասափեան. ՀՀ Հարկային պետական ծառայութեան օպերատիւ-հետախուզութեան վարչութեան պետ: Սպանուել է 2006 թ. Սեպտեմբերի 6-ի առաւօտեան՝ ծառայողական ատոմեքենայով աշխատանքի ուղևորուելիս: Անյայտ յանցագործը գործի էր դրել նրա նստատեղի տակ դրուած ուղմբը:

Ալբերտ Ղազարեան. 2007թ. Օգոստոսի 25-ի գիշերը աշխատանքից

Շար.ը էջ 8

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

1998-2008. Ռոբերտ Քոչարեանի Արիւնոտ Տասնամեակը

Շարունակուած էջ 7-էն

տուն վերադառնալիս իր տան մոտ անյայտ անձի կողմից սպանուեց Լուու մարզի դատախազը:

2007թ. Նոյեմբերի 8-ին, ժամը 18.00-ի սահմաններում Արաբկիրի շուկայի մոտակայքում հրազենային կրակոցից անյայտ անձանց կողմից սպանուել է Սայադ Դաւթեանը. Հայաստանի որսորդների միութեան նախագահ, ԲՀԿ Քանաքեռ-Զէյթուն համայնքի Քանաքեռի տարածքի համակարգող, 1960թ. ծնուած:

1998-2008 քրեական եւ կիսաքրեական աղմկայարույց սպանութիւններ

Վանուշ Թորոսեան. «Դուին» հիւրանոցի տնօրէն: Սպանուել է 2003թ. Օգոստոսի 31-ին Մոսկուայում հրազենային կրակոցից: Նրա հետ միասին սպանուել էին նաեւ ԱՎՄ (Ազատամարտի վետերանների միութիւն) նախկին համանախագահ, ոստիկանութեան պաշտօնաթող գնդապետ Դիոնիս Մարգարեանը եւ ՀՀ ՆԳ նախկին աշխատակից, Մոսկուայի ՆԳ քաղաքային վարչութեան աշխատակից Վալերի Աւանեսեանը:

2005թ. Փետրուարի 4-ին «ՏէՑ-ի կոուզի» փոխհրաձգութեան ժամանակ գոհուել է Մհեր Տէր-Յովհաննիսեանը:

Ռաֆայէլ Շահմուրադեան. Հայաստանում «Աէտովազի» ներկայացուցիչ, «Արմենիա-Լադա» ընկերութեան ղեկավար: Սպանուել է 2005 թ. Փետրուարի 6-ին ՌԴ Սամարայի մարզում՝ Տոլիատի քաղաքի ճանապարհին: Դրանից մէկ տարի առաջ՝ Մայիսի 24-ին, Շահմուրադեանի դէմ մահափորձ էր տեղի ունեցել Երեւանի Բաղրամեան պողոտայում՝ մետրոյի «Բարեկամութիւն» կայարանի մերձակայքում: Անյայտ անձը «Նիվա» մակնիշի ավտոմեքենայից կրակոցներ էր արձակել նրա ուղղութեամբ, ինչից յետոյ Շահմուրադեանը հրաշքով կենդանի էր մնացել. փամփուշտը, անցնելով մարմնի լայնքով, ոչ մի օրգան չէր վնասել: Այն ժամանակ Շահմուրադեանը յայտարարել էր, որ իր դէմ տեղի ունեցած մահափորձի մէջ կասկածում է ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարար Անդրանիկ Մանուկեանին:

Իսկապէս ինքնամոռաց կերպով Սօնա Տիգրանեանը մխրճուել է Մուշեղ Գալշոյեանի համապարփակ գրականութեան մէջ ու նրան նուիրուած սոյն մենագրութիւնը հասցրել դասական աստիճանի: Նրա մանրակրկիտ, ճշմարիտ բնութագրումները գրողի այս կամ այն պատմուածքի, վէպի վերաբերեալ՝ ուղղակի հիացմունքի են արժանի: Խորհուրդս է մէկ անգամ եւս կարդալ Մուշեղ Գալշոյեանի գործերը, մանաւանդ՝ «Ձորի Միրոն» վիպակը, «Մարութա սարի ամպերը» պատմուածաշարը, եւ, իհարկէ՝ «Բովտուն» վեպը: Մանաւանդ, դիտել է պէտք «Ձորի Միրոն» ֆիլմը՝ աննման դերասան Սոս Սարգսեանի խաղարկութեամբ:

2004 թուականին Վարդգէս Պետրոսեանի եղբրական մահուան 10-րդ տարելիցի առթիւ Սօնա

Պետրոսեանը հրապարակ հանեց «Վարդգէս Պետրոսեան, հետմահու անմահութիւն» 240 էջանոց մի հաւաքածու, որի մէջ են նեաւուած Վարդգէս Պետրոսեանի ողբերգական մահուան հետ կապուած մեծաքանակ ցաւակցական նամակներ ինչպէս Հայաստանի, այնպէս էլ Սփիւռքի գրող-մտաւորականներից ու պարբերական մամուլից:

Այս գրքում բազմաթիւ են պաշտօնական, կառավարական, անձնական նամակները, ինչպէս նաեւ Սօնա Պետրոսեանի խոհերն ու մտորումները՝ «Մարդ պարում է այնքան, որքան նրան յիշում են», «Թող ոչ մի գոհ չպահանջուի ինձից բացի», «Յարգանքի եւ անարգանքի խաչմերուկ», «Հաւասարում բազմաթիւ անյայտներով», «Վարդգէսին փնտռէք ապրողների մէջ» վերնագրերով եւ մի քանի այլ ակնարկներ ու փշուր խոհեր:

Սօնա Տիգրանեանի սրտմօտ, յուզիչ գրութիւնները կարգալիս աչքիդ առջեւ են գալիս անկախութեան առաջին 4-5 տարիների ընթացքում մուսթ ուժերի կողմից իրականացուած քստմնելի արարքների շարանը, աւելի քան քսան անմեղ մարդկանց դարանակալ սպանութիւնները, թալանն ու կողոպուտը, ժողովրդի ունեցուածքի չափշտակումն ու մարդկանց փախէ-փախ լինելը հայրենի տնից, հայրենիքից:


Վերջին 3-4 տարիների ընթացքին գրական ժանրի առումով Սօնա Տիգրանեանի հետաքրքրութիւնների շրջանակը հիմնականում կենտրոնացաւ մանկական գրականութեան վրայ: Այդ հետաքրքրութիւնը նրա եւ ամուսնու՝ Վարդգէս Պետրոսեանի մօտ միշտ է եղել: Եւ այստեղ, Լոս Անջելեսում, հանգիստ պայմաններում բոցավառուեց այդ կրակը Սօնայի հոգում, որին, անկասկած նպաստեց սեփական մանկապարտէզ ունենալու պա-

Շար.ը էջ 18

St. Gregory Armenian Church

SAVE THE DATE

Under the Auspices of
His Eminence
Abp. Hovnan Derderian
Primate of the Western Diocese



Celebration of the 20th Anniversary of Ordination
To the Sacred Priesthood of Christ
And the 50th Anniversary of Service to the
Armenian Apostolic Church

of
Rev. Fr. Archpriest Sarkis Petoyan
On Sunday, September 9, 2018
10:30 a.m. Celebration of Divine Liturgy
Immediately Followed by a Luncheon at Geragos Hall
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՌՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ ՄՊԱՍԵԼՈՎ ԳԱԼԻՔ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ

ԱԶՍՏՈՒԴԻ ՄԻՍՈՆԵԱՆ

Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը Հայկազեան Համալսարանէն ներս իր ստեղծուածն ի վեր իր աշխատանքի կիզակէտը դարձուցած է միջինարեւելեան երկիրներու մէջ բնակութիւն հաստատած հայ համայնքներու պատմական, ընկերային, քաղաքական, կրթական եւ մշակութային կեանքի արտացոլումն ու ուսումնասիրութիւնը: Այս աշխատանքներու այժմեականութիւնն ու անհրաժեշտութիւնը կը բացատրուի անով, որ գաղութները հետզհետէ կը պարպուին իրենց հայ գանգուածներէն ու հայկական հաստատութիւնները կը կորսնցնեն գիրենք ոտքի կանգնեցնող մարդու ժը: Վերջին տասնամեակի ընթացքին իրաքահայութեան հայաթափումը, յատկապէս Մուսուլի հայութեան ամբողջական պարպումով, հետեւանքն էր իսլամ ծայրայեղական խմբաւորումներու գործադրած խժոճութիւններուն եւ ջարդերուն յատկապէս քրիստոնեայ հաւաքականութիւններուն նկատմամբ: Իսկ Սուրիոյ պատերազմը եկաւ լախտի հարուածը տալու սուրիահայութեան եւ ի մասնաւորի հալչպահայութեան, պատճառելով թուաքանակի աննախընթաց անկում եւ արտագաղթ:



ներու միջեւ եւ ստեղծէ գործակցութեան եւ իրարօգնութեան այնպիսի մթնոլորտ մը, որ ապահովէ ազգային ծրագրերուն իրագործումը: Բնականաբար ներկայ Հայաստանը ունի իր կատարելիք դերը այս ուղղութեամբ, երբ ան ի վիճակի ըլլայ ձեռք մեկնելու Սփիւռքին, թօթափելէ ետք իր յառաջխաղացքը կասեցնող բոլոր արգելքները:

Կեդրոնի տնօրէն Դոկտ. Անդրանիկ Տազեան իր բացման խօսքին մէջ անդրադառնալով գիտաժողովի գեկոյցներուն, այսպէս կը բնութագրէր գանոնք. «Անոնք չեն սահմանափակ ուրիշ լոկ գիտելիքի փոխանցմամբ: Այդ գիտելիքին մէջ կայ գնահատանք՝ իրագործութիւն հանդէպ, պայքար՝ գոյատեւումի, ճիշդ՝ աջակցութեան, կոչ՝ որոնումի, թելադրանք՝ խորաթափանց եւ այլատեսակ վերլուծումներու, մարտահրաւրէր՝ գալիքի»: Այդպիսին էին բազմաթիւ եւ բազմաբնոյթ գեկոյցները, որոնք քննարկումներու բովանդակ ալ անցնելով ստեղծեցին համապատասխան աշխուժ եւ կենսունակ մթնոլորտը, որ ապահովեց գիտաժողովին հեզասահ ընթացքը: Թէեւ կարելի էր փոխանակ երկու օրուան, աշխատանքները տարածել երեք օրերու վրայ՝ նուազ խճողելով օրուան յազեցած յայտագիրը, որպէսզի մաս նակիցներն ու ունկնդիրները կարենային առաւել խորութեամբ եւ կեդրոնացումով հետեւիլ ակադեմական լուրջ ծրագրին: Այս առիթով տեղին է մատնանշել չափազանց սակաւթիւ ներկայութիւնը լիբանանահայ համայնքի ներկայացուցիչներուն, յատկապէս՝ երիտասարդական, մշակութային ու կրթական շրջանակներէն: Այս մէկը կարեւոր իրադարձութիւն մըն էր գաղութի կեանքին մէջ եւ որպէս սփիւռքահայ մայր գաղութ կ'արժէր որ աւելի մեծ թիւով մասնակիցներ իրագեղ դառնային արծարծուած նիւթերուն ու սուրբ գաղութներու խնդիրներուն:

Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փոլ Հայտոսթեանի ողջոյնի խօսքը կ'ընդգրկէր նաեւ թելադրականութիւն մը՝ ապագայ գիտաժողովներու կազմակերպման կապակցութեամբ: Ան կ'ընդգծէր. «Մեր տարիներու գիտաժողովները կազմակերպուած են պատմութեան, քաղաքականութեան, աշխարհագրութեան, տնտեսագիտութեան, սփիւռքագիտութեան, արուեստներու եւ այլ նիւթերու ուսումնասիրութեան մասին գրեւոր եւ անոնց հանդիպման կէտերու սերտողութեան նպատակաւ: Մեր լսած գեկոյցներուն մէջ թերեւս նուազ

չեղտ դրուած է հոգեբանութեան, աստուածաբանութեան եւ մարդաբանութեան մարզերուն վրայ: Հոն ուր երկու հայ գիտաժողովի համար կը հաւաքուին, հոն կը ծնին նոր հայկական յուշահանդէս մը, պատմութիւն մը, ազգային նիւթերու քննարկ մը, ներուժ մը»: Վեր. Հայտոսթեանի տեսլականն ու յանձնառութիւնը սոյն գիտաժողովներուն ի խնդիր, կ'ապահովեն անոնց շարունակականութիւնը եւ արդիւնաւէտութիւնը ապագայի հայ ազգային եւ համագաղութային կեանքին մէջ:

Գիտաժողովի պաշտօնական բացման հանդիսութեան հիւր դասախօսն էր Արմինիըն Նեշընըլ Ինսթիթիյութի (ANI) տնօրէն, ցեղասպանագետ Դոկտ. Ռուբէն Ատալեան, որ «By the Nile and the Sea, the Currents and Tides of Modernity and the Role of the Armenian Diaspora of Northeast Africa» վերնագրեալ դասախօսութեամբ բազմակողմանի մօտեցումով եւ խոր վերլուծումով ներկայացուց փոփոխեան երկիրներու անցած վերջին երկու դարերու քաղաքատնտեսական եւ ընկերամշակութային համապատկերը: Խորանալով Աֆրիկեան Եղջիւրի երկիրներու արդիականութեան ձգտող վերիվայրումներուն եւ հայ փոքրամասնութիւններու եւ պետական դէմքերու հակազդեցութիւններուն՝ ան անդրադարձաւ նաեւ այդ երկիրներէն Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ մէջ տեղի ունեցած ազգայնականութեան հոսանքներուն, որոնց հետեւանքները ծանր անդրադարձ ունեցան հայ համայնքներուն վրայ: Տնտեսութեան ազգայնացումը մեծ պատճառ էր այդ երկիրներու հայաթափութեան: Այդ համայնքները մեծ դեր կատարած էին համաշխարհային երկու պատերազմներուն մեծապէս տուժած հայ ժողովուրդի զաւակներուն՝ անոնց հասցնելով մարդասիրական մեծ ծառայութիւն ներ: Իրենց տնտեսական բարգաւաճ կեանքը - որ գերմանացած էր երկու պատերազմներուն պատճառով ցնցումներէն առիթը տուաւ լայն օժանդակութիւններով հասնելու իրենց պապենական հողերէն բռնահանուած ու ցեղասպանութեան ենթարկուած հայ ժողովուրդի զաւակներու մնացորդացին: Ատալեան կ'ըսէ. «Աֆրիկեան հայագաղութներու միջին դասակարգի այս մասնագէտներու եւ արհեստավարներու պատկանող հայ ժողովուրդի զաւակներու արժեքահանակարգը եւ ընկերային նկարագիրը գիրենք դարձուցին չափազանց յաջող իրենց գործառնութեանց մէջ: Միաժամա-

նակ, ասիկա հանդիսացաւ նաեւ դրդապատճառը՝ դառնալու անմեղ գոհերը շրջանի ազգայնականութեան բոցավառող հոսանքներուն եւ տնտեսութեան ազգայնացման հաւուր իրականութեան»:

Դոկտ. Ատալեանի սպառնիչ դասախօսութիւնը վաւերագրական փաստաթղթային լուսանկարներով եւ քարտէսներով ամբողջացած, անհրաժեշտ ենթահողը հանդիսացաւ յաջորդող 26 գեկոյցներուն:

Տրուած ըլլալով, որ կարելի չէ անդրադառնալ գիտաժողովի բոլոր գեկոյցներուն յօդուածի մը պարունակին մէջ, պիտի ջանամ կարգ մը մատնանշումներ կատարել եւ խորհրդածութիւններ փոխանցել գիտաժողովի ընթացքին ձեռք բերուածին վե բաբերեալ:

Չեկոյցներու կարեւոր մասը կը պատկանէր Եգիպտոսի հայագաղութին: Ասոնք գերակշռող էին թէ՛ որակով եւ թէ՛ քանակի տեսակէտէն: Յատակ է, որ Եթովպիոյ եւ Սուտանի հայ գաղութներու ուսումնասիրութիւնը իր նախնական քայլերուն մէջն է եւ կը զգացնէ կարիքը յաւելեալ ճիշդութեամբ՝ գանոնք լուսարձակի տակ առնելով արդարութիւն կատարելու անոնց ձեռքբերումներուն, ազգի կեանքին մէջ:

Դոկտ. Ճոն Արմաճանիի գեկոյցը՝ «Սուտանի եւ Եթովպիոյ Սահմանագրութիւնները եւ Փոքրամասնութիւններու Իրաւունքները» նիւթով, որ յատուկ կերպով այս գիտաժողովի կազմակերպիչներուն թելադրութեամբ պատրաստուած էր, լաւ սկիզբ մըն է տուեալ երկիրներու վերաբերեալ կատարուելիք պայքայ ուսումնասիրութիւններուն համար: Այս ծիրին մէջ կ'իյնայ նաեւ երիտասարդ Աննա Աւագեանի «Սուտանի Հայօճախը» գեկոյցը: «Սուտանի Հայերը ԺԹ-Ի. Դարերուն» խորագրուած գեկոյցը Դոկտ. Մուհամմատ Ռիֆաթ Ալիմամի, որ հանրածանօթ է Եգիպտոսի ակադեմական շրջանակներուն, տեղի չունեցաւ գեկոյցաբերին բացակայութեան պատճառաւ: Դոկտ. Ալի մամ կը նկատուի անաչառ պաշտպանը եւ ջատագովը հայ ժողովուրդի դատին եւ համաշխարհային քաղաքակրթութեան բերած անոր կարեւոր նպաստին:

Գիտաժողովի Եթովպիոյ բաժնին մէջ իր ներդրումը ունեցաւ Դոկտ. Պորիս Աճեմեանը, որ տնօրէն է Փարիզի ՀԲԸՄ Նուպարեան Մատենադարանին: Անոր ներկայացուցած զոյգ դասախօսութիւնները, որոնք քսան տարիներու ուսումնասիրութեանց արդիւնք էին՝ «Գաղթի Յուշեր. Քսաներորդ Դարու Եթովպիոյ մէջ Հայերու Օճախի մը Յառաջացումը», ինչպէս նաեւ «Արքային Փողերախումբը եւ Հայերու Օգտագործումը Եթովպիոյ Արտաքին Քաղաքականութեան մէջ (Ի. դար)» ցարդ գրեթէ բոլորովին անկոխ եւ անմշակ մնացած մարզերու յայտնաբերումը կը կատարէին որպէս նախնական աղբիւր Եթովպիոյ մասին ըլլալիք ապագայ ուսումնասիրութիւններուն: Հետաքրքրական էր նաեւ Ռուբինա Սվաճեան-Քիւնկուէլի գեկոյցը իր հօր՝ Պետրոս Սվաճեանի, կեանքին նուիրուած, որ կայսր Հայլ Սիլասէի ոսկերիչն էր: Ան իր պրպտումներով յայտնա-

ԿԵԱՆՔԻՑ ԴԵՌԱՅԵԼ Է ԴՅ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ԶԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԸ

ՀՀ ԳԱԱ նախագահութիւնը խորը ցաւով յայտնում է, որ կեանքի 97-րդ տարում իր մահականացուն կնքեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՌԴ Գիտութիւնների ակադեմիայի արտասահմանեան անդամ, համաշխարհային հեղինակութիւն վայելող գիտնական, հայկական մեխանիկայի դպրոցի հիմնադիրներից, գիտութեան ու կրթութեան հմուտ կազմակերպիչ, պետական ու հասարակական յայտնի գործիչ Սերգեյ Համբարձումեանը:



Քան 50 երիտասարդ գիտնական պաշտպանել է դոկտորական ու թեկնածուական թէզ: 1977-1991 թթ. Սերգեյ Համբարձումեանը եղել է Երեւանի պետական համալսարանի ռեկտորը:

Սերգեյ Համբարձումեանը հակայական դեր է ունեցել Հայաստանի հասարակական կեանքում: 1975-1980 թթ. հանդիսանալով Հայաստանի Գերագոյն խորհրդի պատգամաւոր ու նախագահ, իսկ 1979-1992 թթ.՝ ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի պատգամաւոր, 1989 թուականից՝ ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի նախագահութեան անդամ՝ նա միշտ անզիջում պաշտպանում էր Հայաստանի շահերը:

Ակադեմիկոս Սերգեյ Համբարձումեանի վաստակը բարձր է գնահատուել: ԽՍՀՄ կառավարութեան կողմից նա արժանացել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի, Սերգեյ Վավիլովի անուան, Հոկտեմբերեան յեղափոխութեան, Պատուոյ նշան շքանշանների: Պարգևատրուել է Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի, Յան Կամենսկու շքանշաններով, «Աշխատանքային արիւթեան համար», «Խաղաղութեան մարտիկ», «Բարեկամութիւն», Երեւանի պետական համալսարանի, Մոսկուի համալսարանի, Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի մեդալներով: ՌԴ նախագահի հրամանագրով Սերգեյ Համբարձումեանը պարգևատրուել է «Ժողովուրդների բարեկամութիւն» շքանշանով, ՀՀ նախագահի հրամանագրով՝ «Տիգրան Մեծ» շքանշանով:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատուական վերլուծական ծառայութիւն

Հայկական Մշակոյթի Ցուցադրութիւն Նիւ Եորքի Մէջ

Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանատան ֆէյսպուքեան էջը կը տեղեկացնէ. «Նախորդ ամսուան շատ յաջողուած Սմիթսոնեան ֆոլքլայֆ փառատօնին, երբ Ուաշինկթընի մէջ ներկայացուցաւ հայկական ժառանգութիւնը, աւանդույթներն ու մշակոյթը, անմիջապէս կը հետեւի մէկ այլ խոշոր ցուցահանդէս, որուն բացումը պիտի ըլլայ շուտով՝ Նիւ Եորքի Մեթրոփոլիթան թանգարանին մէջ՝ ներկայացնելու Հայաստանի 14 դարերու պատմութիւնն ու մշակոյթը: 23 Սեպտեմբերէն այցելուները պիտի կարենան ուսումնասիրել



Հայաստանի մշակութային նուաճումները՝ սկսած 4-րդ դարէն, երբ հայերն ընդունեցին քրիստոնէութիւնը, մինչեւ 17-րդ դար, երբ համաշխարհային առեւտուրի ուղիներուն հայերու ծաւալած գործունէութեան արդիւնքով հայերէն տպագիր գիրքեր յայտնուեցան ամբողջ տարածաշրջանին մէջ»:

ԸՆԿ. ԱՐԱՏԵՆ ՏԱԳԵՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վերջերս Պէյրութի մէջ իր մահկանացուն կնքեց Ս.Դ.Գ.Կ. Տիրուհի Երիտասարդական եւ Ուսանողական Միութեան նախկին ղեկավարներէն եւ հաւատաւոր ու գործունէ վաստակաշատ հասարակական գործիչ ընկեր Արսէն Տագեսեանը: Այս առթիւ իր քառասունքին կապակցութեամբ Պէյրութի «Արարատ» օրաթերթէն կ'արտատպեն իր մասին գրուած մահախօսականը:

Խմբ.

Քառասուն օրեր առաջ հողին յանձնեցինք ընկ. Արսէն Տագեսեանն ալ:

Ինչքան չսիրենք այս տողը, ինչքան չուզենք լսել այդ, բայց կը ստիպուինք վերստին ու վերստին հանդիպիլ անոր. ամենէն անհրապտյըր սակայն, երբ դո՛ւն կը ստիպուիս գրել այդ՝ առանց ուզելու, առանց հաւատալու, դժուարաւ...



Իրապէս դժուար է գրել ընկ. Արսէնի մահուան առիթով: Միտքդ 45 տարի ետ կ'երթայ՝ Ս. Դ. Գ. «Տիրուհի» Ուս. Երիտ. Միութեան եռուն օրերը, ուր ընկ. Արսէն կեդրոնական դէմքն էր: Ան սիրուած էր բոլոր ընկերներէն իր համեստութեան, նուիրումին, կազմակերպչական կարողութեան, ուղղամտութեան եւ բազում այլ յատկանիշներուն պատճառով: Գործունէայ էր՝ միաժամանակ լրջախոհ եւ բծախնդիր. իրեն համար առաջնային, երկրորդական կամ ի միջի այլոց հարցեր չկային. ամենէն փոքր թուացող հարցին համար անգամ կը խորհրդակցէր, կը բացատրէր եւ անոր լուծման բծախնդիր գործադրութիւնը կը պահանջէր: Ընկերասէր էր. ինչպէս կ'ըսեն՝ «մեծին հետ մեծ, փոքրին հետ փոքր»: Շուտ կ'ընտելանար շրջապատին եւ շուտ ալ իր ազդեցութիւնը կը տարածէր անոր վրայ: Ընկ. Արսէն աշխատանքի ամենէն եռանդուն պահուն իսկ օրինապաշտ էր, ծայր աստիճան կարգուկանոնի պաշտպան: Չէր հանդուրժեր թափթփածութիւնը, անպարտաճանաչութիւնը:

Վրայ եկաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմը: Օրուան պահանջքն ելած միութեանական աշխատանքներու ձեւին մէջ նորութիւններ մտան: Դէպքերուն սկիզբը Պէյրութ վերածուեցաւ խառնարանի մը: Ամէն անկիւն ծնաւ գինեակներու խումբ մը՝ անիշխանական, անօրէն, քրէական բոլոր տեսակներով: Այս պարագային եւս, ընկ. Արսէն ցոյց տուաւ իր պատասխանատուութեան գիտակցութիւնը, համարձակութիւնն ու յանդուգն հոգին: Ամէն բան պէտք է ըլլար լրջութեամբ եւ կազմակերպուած: Չէր սիրեր մեծախօսիկները. ընդհանրապէս կ'ատէր իրենց ըրածին մասին խօսողները:

Կեանքը այնպէս բերաւ որ Արսէնը աշխատանքի համար մեկնի Ծոցի երկիրներ: Բոլորս ալ գիտէինք որ սիրտը հո՛ւն է, Լիբանանին հետ, լիբանանահայութեան հետ, իր ընկերներուն հետ: Արձակուրդներուն կու գար (եթէ պատերազմական պայմանները ներէին) ու մէկիկ-մէկիկ կը հետաքրքրուէր բոլորով, ամէն ինչով:

Վերադարձաւ Լիբանան որպէս ընտանիքի տէր, կեանքի թացն ու չորը տեսած, հասուն մարդ եւ հասուն կուսակցական: Վերստանձնեց կուսակցական պարտականութիւններ: Բայց միեւնոյն Արսէնը մնացած էր. պատրաստ որեւէ պարտականութեան, բծախնդիր, խստապահանջ, սխալներուն եւ թուլութիւններուն հանդէպ բողոքող:

Արսէնին համար ամենէն դժուարը եղաւ գամուած մնալ անկողինին, կտրուած իր սիրելի ժողովուրդէն եւ ընկերներէն, ընկերային կեանքի առօրեայ հեքէն հեռու:

Արսէն Տագեսեան մեկնեցաւ ետին ձգելով իր հանդէպ սիրով եւ յարգանքով լեցուած ընկերներու փաղանք մը, որոնց մօտ անոր յիշատակը վառ կը մնայ ընդմիշտ:

ՎՇՏԱԿԻՐ ԸՆԿԵՐԴ



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՈՆՐԱՆԵՏԻ (BOOMERANG) ՍԿԶԲՈՒՆԵՐ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԻ ՏԱՐԲԵՐ ՆՇԱՆՆԵՐՈՒ ՅԱՍԱՐ

Մեր բոլոր գործողութիւնները ունին իրենց հետեւանքները: Այն վատը, որ մենք ըրած ենք կեանքի մէջ, անպայման ետ պիտի գայ, սակայն ո՛չ նոյն ձեւով: Ոլորանետի սկզբունքը ամէն մէկուն համար տարբեր կ'աշխատի: Հպարտութիւն, եսասիրութիւն, անպատասխանատուութիւն, անձնազուտութիւն, ստախոսութիւն, կենդանակերպի տարբեր նշան ունի իր թոյլ տեղերը եւ թերութիւնները: Ըստ մեր բնաւորութեան՝ մենք կ'ընենք սխալներ, որոնց համար մոլորակը մեզի կը վերադարձնէ զանոնք: Խոյ: Խոյերուն ոլորանետով կը վերադառնան անոնց խօսքերը, որոնց հազուադէպ կը հետեւին: Մէկ կողմէն լաւ է, որ անոնք այդքան ազնիւ են, սակայն միւս կողմէն ատիկա անոնց համար կործանիչ է: Օրինակ՝ կը պատահի, որ անոնք գործընկերոջ օգնութեան կարիքը ունին, սակայն վերջինս կը չի շնորհակալուի իր վերաւորանքը: Խոյերը ընդհանրապէս հազուադէպ օգնութիւն կը խնդրեն, սակայն կեանքի մէջ ամէն ինչ կրնայ պատահիլ: Այդ ժամանակ ալ ամէն ինչ ոլորանետով կը վերադառնայ անոնց:



սիրոյ, գործերու, նիւթականի մէջ:

Կշիռք: Կշիռքները շատ անհոգ են, այդ պատճառով անոնք կեանքի մէջ շատ դժուարութիւններու կը հանդիպին: Անոնք չեն հետեւիր ծախսերուն, սխալ կը սնուին, յետոյ կը զարմանան, թէ ինչու ունին քիչ դրամ եւ վատ ինքնազգացողութիւն:

Կարիճներ: Կարիճները կը սիրեն խաղեր եւ դիւրութեամբ կը դադրին իրենց համար հաճելի մարդոց հետ կապ ունենալէ: Այդ իսկ պատճառով անոնց մէջ քի ետին միշտ կը բամբասեն: Այդ պատճառով ալ աստղերը եւ մոլորակը կը շրջապատեն անոնց խնդիրներով՝ զրկելով լաւ եւ վատ մարդոց տարբերելու ունակութենէն:

Աղեղնաւոր: Աղեղնաւորները շատ ազատասէր են: Տպաւորութիւնը այնպէս է, որ անոնք միայն իրենց մասին կը մտածեն: Շատ կը սիրեն, երբ իրենց յաղթող կ'անուանեն, այդ պատճառով պատրաստ են ամէն ինչի՝ առաջին տեղի համար: Ոլորանետի սկզբունքը անոնց համար կ'արտացոլուի մշտական մանր եւ կաշտուն խնդիրներով:

Այծեղջիւր: Այծեղջիւրները կը սիրեն իրենց երկրագունդի արքայ ձեւացնել: Անոնք չափազանց լուրջ են, այդ պատճառով անոնց ոլորանետով կը վերադառնան անսովոր տհաճ իրավիճակներ, որոնց պատճառով բոլորը կը ծիծաղին իրենց վրայ: Ատիկա կը պատահի հազուադէպ, բայց նշանակեալային:

Ծովանուշ: Ծովանուշները իրենք իրենց կը դնեն հերոսներու տեղ, որոնց համար դժուար է փրկել աշխարհը աղէտներէն: Անոնք կը փորձեն ուրիշներուն կապել իրենց կարծիքը եւ ատիկա դարձնել իրականութիւն, որուն համար ճակատագիրը անոնց դժանօրէն կը պատժէ ընտանեկան եւ անպասելի խնդիրներով՝ նոյնիսկ լաւ ընկերները կը լքեն իրենց:

Ձուկ: Ձուկերուն հետ ամէն ինչ պարզ է՝ անոնք երազկոտ են եւ կ'ապրին միայն հիասքանչի մասին մտքերով: Անոնց կը պակսի լրջութիւնը, այդ պատճառով անոնք կը պատժեն իրենք իրենց: Ընդհանրապէս, որքան շատ ցոյց տանք մեր բնաւորութիւնը, այդքան աւելի շատ ապտակներ կը ստանանք ճակատագիրէն: Շատերը ունակ չեն ատիկա հասկնալու, իսկ միւսները ուղղակի չեն ուզեր հասկնալ: Մարդու էութիւնը այնպէս է, որ ան միշտ առաջ կը տանի իր գիծը եւ չի դաւաճաներ սկզբունքներուն, որոնք անոր մէջ արմատաւորուած են ծնողներու եւ մոլորակի կողմէ: Այսպէս թէ այնպէս, բայց կեանքը առանց դժուարութիւններու կեանք չէ: Յաջողութիւն ձեռք:

ԻՆՉԸ ԱԻԵԼԻ ՑԱՆԿԱԼԻ ԿԸ ԴԱՐՁՆԵ ԿԻՆԸ

1) Վստահութիւնը բանալի է: Ո՛չ թէ արտաքինով կատարեալ ըլլալ, այլ քայլել վստահ, ուժեղ քալուածքով՝ գլուխը բարձր պահած, տեսողական կապ պահելով եւ լայն ժպիտով: Վստահութիւնը յաջողութեան հիմքն է, անիկա կրնայ տանիլ դէպի այն, ինչին դու կը ձգտես, իսկ ատիկա շատ ցանկալի է:

2) Զգտումները մարդուն նպատակ եւ կեանքի մէջ ուղղուածութիւն կը հաղորդեն: Զգտումները ցանկալի են, քանի որ անոնք ձգտումներ ունեցող տղամարդուն թոյլ կու տան իր տիկնոջ նայելու իբրեւ հաւատարմ, ընկեր, որուն հետ ան կրնայ նուաճել աշխարհը: Իսկ յարաբերութիւնները այդպէս ալ պէտք է ըլլան:

3) Կիրք: Կիրք կեանքի հանդէպ: Կիրք այլ մարդու հանդէպ: Կիրք նախասիրութեան, արուեստի, երաժշտութեան, որեւէ բանի հանդէպ, որով կը հետաքրքրուի կինը: Այն, թէ ինչպէս կինը կը տարուի որեւէ բանով, ինքնին ցանկալի է:

4) Բարութիւն: Ցաօք՝ շրջապատին վերաբերեալ բարութիւնը հիմա շատ հազուադէպ է: Օտար մարդու հանդէպ կարեկցանք՝ անկախ անկէ, թէ ով է ան եւ հասարակական

րակական ինչ կարգավիճակ ունի, նշան է, որ մարդը մեծ սիրտ ունի, իսկ ատիկա շատ աւելի գրաւիչ է քան արտաքին գրաւչութիւնը:

5) Ազնուութիւն: Երբ կինը ազնիւ է այն բանի մէջ, թէ ինչ պիտի է, ատով իսկ յարգանք կը ցուցաբերէ տղամարդու նկատմամբ՝ ոչինչ թաքցնելով անկէ: Որքա՞ն կրնաք ապրիլ գեղեցիկ ստախօսի հետ: Եթէ դու չէք կրնար վստահիլ ձեր գուզընկերոջ, կրնա՞ք ան ձեզ ցանկալի համարել:

6) Վեհանձնութիւն: Անիկա արժանապատուութեան զգա ցումն է, որով կինը ինքզինք կը մատուցէ, ինչպիսի յարգանք կը դրսեւորէ շրջապատին հանդէպ: Կարեւոր չէ, թէ ինչ ինքնաշարժ ունի, քաղաքի ո՛ր հատուածին կամ ո՛ր բնակարանին մէջ կ'ապրի կինը, ինչպիսի հազուստ կը հագուի: Եթէ ան զգուշի վերաբերմունք կը ցուցաբերէ միւսներուն հանդէպ, ատկէ կը խամբի անոր արտաքին գեղեցկութիւնը:

7) Գիտելիքներ: Հազուստով կը դիմաւորեն, խելքով՝ կը ճանապարհեն: Եթէ տղամարդը ձեր հետ խօսելու բան չուի, ձեր գեղեցկութիւնը արագ կը մարի: Իսկական յարաբերութիւնները կը կառուցեն յարաբերութեան վրայ:

ՁԵՐ ՍԻՐԱԾ ՊՏՈՒՂԸ ՊԻՏԻ ՊԱՏՄԷ ՁԵՐ ԲՆԱԴՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ կը փափաքիք գիտնալ դիմացինին բնաւորութեան մասին առանց երկարբարակ հարց ու փորձերու, ձեզի պի տի բաւականացնէ գիտնալ, թէ ան ինչ պտուղ կը սիրէ ամէնէն աւելի:

Նարինջ: այս պտուղի սիրահարները միշտ կ'առանձնանան իրենց աշխուժութեամբ, ուշադրութիւն կը գրաւեն դրական ուժով: Անոնք դիւրին կերպով առաջ կ'ընթանան եւ դիւրին կը կայացնեն իրենց որոշումները: Դիւրին լեզու կը գտնեն մարդոց հետ, դիւրին կը շփուին, բայց եւ դիւրութեամբ ալ կրնան բաժնուիլ:

Բալ կամ կեռաս: այս մարդիկ կրնան չարածճիւղութիւններ ընել նոյնիսկ մեծ տարիքին: Անոնք նման են չարածճի փոքրիկի: Անկանխատեսելի են, երբեմն՝ անզգոյշ: Շատ կը գնահատեն իրենց մտերիմները: Կ'առանձնանան նաեւ իրենց բարութեամբ:

Ելակի սիրահարները ունին փայլուն ուղեղ: Անոնք հիանալի կարողութիւն ունին համոզելու մարդոց, համաձայնելու անոնց հետ իրենց պէտք եղած ապրանքին կամ ծառայութեան համար: Սիրախաղը անոնց օդի պէս հարկաւոր է: Այդ պատճառով ալ այս տիպին պատկանող տղամարդիկ շատ խանդոտ են, որ կրնայ խնդիրներու մէջ ձգել անոնց:

Խաղող: այս մարդիկ կը խուսափին մենակութենէ, դիւրահաւատ են եւ դիւրութեամբ կը նուիրուին: Կը սիրեն ըլլալ ուշադրութեան կեդրոնին, բայց յաճախ կը խուսափին արձագանգներէն: Պանանի սիրահարները շատ փխրուն են: Անոնք հակուած են բարձր զգայունութեան: Անոնց բնորոշ են նաեւ վեհ զգաց մունքները: Յան-

կութեան պարագային անոնք կրնան հասնիլ մեծ յաջողութեան, եթէ սիրելի գործի համար զոհեն իրենց:

Տանձ: այս պտուղը սիրողները լաւատեսներ են: Անոնք շրջապատի հոգին են, բոլորին աշխուժացնողը: Տանձ սիրող կիները կը փնտռեն այնպիսի տղամարդ, որ կրնայ պաշտպանել իրենց, հոգ տանիլ: Անոնք կ'երազեն իրենց կողքին տեսնել իսկական արքայազնը:

Խնձոր: անոնք շատ վստահելի մարդիկ են: Կը շարժին միայն լաւ ծրագրաւորուած ուղեցոյցով, պահանջողական են: Անոնք լաւագոյն մայրերն են: Իսկ տղամարդիկ կը տարբերին իրենց նրբանկատութեամբ:

Զմերուկ: այս մարդիկ կը տարբերին շփումներու մէջ ազատութեամբ, բարոյցներու բացակայութեամբ, սակայն նաեւ ուշադրութիւն կը գրաւեն անհասարակ շին բնաւորութեամբ: Անոնց պոռթկունութիւնը յաճախ պատճառ կը դառնայ մեծ աղմուկի: Զմերուկի սիրահար տղամարդիկ համեղ ուտեստներու մեծ երկրպագու են: Կանայք զգացմունքային են, կը սիրեն կենդանիները: Անկեղծութիւնը ձմերուկի սիրահարներու գլխաւոր յատկանիշերէն է:

Ծիրանի սիրահարները սովորաբար կը տիրապետեն պերճախօսութեան, կ'ունենան բարի աչքեր: Անոնք շատ մեծ վստահութիւն կը ներշնչեն եւ առաջին շփումէն այնպիսի տպաւորութիւն կը ձգեն, կարծես ամբողջ կեանքի մէջ ճանչցած ըլլաք զինք: Սակայն որեւէ ոտնձգութիւն անոնց ազա տութեան հանդէպ, եւ հարուածը պատրաստ է...

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

Գերմանական «Deutsche Well»

Շարունակուած էջ 6-էն

տաքին կապերը, գրում է էգերտը: Խօսքը ՆԱՏՕ-ին անդամակցելու մասին է. Հայաստանն այդ դաշինքին միանալու ո՛չ ցանկութիւն ունի, ո՛չ շանսեր: Ինտեգրման ցանկացած քիչ թէ շատ լուրջ փորձ կ'արգելափակուի Թուրքիայի կողմից: Հայաստանի անվտանգութիւնը եւ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կախուած է Ռուսաստանից: Դրա հետ չի վիճում նաեւ Նիկոլ Փաշինեանը: Մոսկուա կատարած այցի ժամանակ նա գովաբանական ներքող կարդաց առ ՀԱՊԿ եւ Մաքսային միութիւն: Սակայն Հայաստանի վարչապետն էլ ունի իր առաջնահերթութիւնները: Նրանից պահանջում են պայքար կոուպչիայի դէմ, տնտեսութեան, ներդրումների վերածնունդ: Վստահութեան մանդատը, որը նա ստացել է գարնանը- կարող է արագ աւարտուել:

Կայունութիւնն ռուսական ձեւով
Բայց կրեմլին դա էլ չի գոհացնում: Հայաստանի հարցում միայն արտաքին քաղաքական լոյսալուծիւնը բաւարար է: Նրան պէտք է լիարժէք վերահսկողութիւն եւ այն իւրօրինակ մոսկովեան «կայունութիւնը», որն ապահովում է ստուերային պայմանաւորութիւններով, քաղաքական

ընդդիմադիրների հետապնդումներով եւ անդրսահմանային կոուպչիայով: Ռուսաստանի ներկայիս ղեկավարութեանը միանգամայն յարմար է այնպիսի Հայաստան, որը նաեւ հենուած է Ռուսաստանի սփիւռքից եկող դրամական փոխանցումների վրայ: Ռուսամէտ տրամադրուած հայերի յոյսերը, որ իրենց թոյլ կը տան մի փոքր հաւաքել սեփական տունը, փշրուած են Մոսկուայից եկող արձագանքի վրայ: Ռուսաստանի արտգործնախարարը հանդէս է գալիս Բրիտանական Հնդկաստանի փոխարքայի ոգով՝ նեարդայնացած Ձերդ Մեծութեան կառավարութեան կողմից երջանկացած «բնիկների» «անշորհակալ» վարքից: Անգամ դաշնակիցների հետ յարգալից խօսելու ցանկութեան բացակայութիւնը պաշտօնական Մոսկուային կը տանի նոր պարտութիւնների յետխորհրդային տարածութիւնում, եւ հնարաւոր է, նաեւ այնպիսի երկրներում, որոնք այսօր համարուած են նրա դաշնակիցները: Բրիտանական Հնդկաստանը, եթէ որեւէ մէկը չի լքում, իր գոյատեւման աւարտը դրեց 1947թ., եզրափակում է կոնստանտին էգերտը:

Պատրաստե՛ք ՎԻՍՏՈՐԻԱ ԱՆԴՐԵԱՍԵԱՆԸ «ԱՌԱՓՕՏ»

ՍՈՒՏՔ ՍՈՆԱ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՆԵՐՍ

Շարունակուած էջ 14-էն

րագան: Գաղտնիք է, որ բոլոր ժամանակներում էլ մեր առօրեայում զգալի է եղել մանկական գրականութեան պակասը: 2015 թուականին. «Վարդգէս Պետրոսեան մշակութային ֆոնդի» հրատարակութեամբ, բոլորիս ծանօթ Սարգիս Թօփալեանի Երեւան տպարանում շքեղ, գունաւոր տպագրութեամբ, աւելի քան բարձրորակ թղթի վրայ տպագրուեց Սօնա Տիգրանեանի երեք գիրքը, յաջորդաբար՝ «Ծաղկած այբուբեն», «Անմոռուկ», «Երկիր» անուանումներով: Ըստ որում առաջին երկուսը դասական ուղղագրութեամբ եւ արեւմտահայերէն լեզուով: Միանգամայն ողջունելի եւ գնահատանքի արժանի քայլ: Մեր այբուբենի իւրաքանչիւր տառի համար հրատարակչներն օգտագործել են Միտլան Երիցեանի փառայեղօրէն նկարագրութեամբ տառերը (ափսոս, որ նրա անունը չի նշուած միւս անունների կողքին...,- ՀԵՆ. Ա.): Մեր այբուբենի 36 տառի համար Սօնա Տիգրանեանը հիանալի, ակննջ շոյող, մէկը միւսից գեղեցիկ քառեակներ ու բանաստեղծութիւններ է յօրինել, ըստ որում, շատ դէպքերում էլ մէկ տառի համար յօրինել է երկու-երեք բանաստեղծութիւն: Հիանալի գոյներով նկարագրուած բանաստեղծութիւններով եւ փոքրիկ պատմութեան վերջով է ամբողջացած Սօնա Տիգրանեանի յաջորդ՝ «Անմոռուկ» փոքրածաւալ գիրքը: Միանգամայն լուրջ բանաստեղծութիւններ կան Սօնա Տիգրանեանի նոյն՝ 2015 թուականին հրատարակ ելած, հիանալի գոյներով նկարագրուած հայրենա-

սիրական բանաստեղծութիւններով եւ փոքրիկ պատմութեան վերջով աւելի «Երկիր» գրքում: Այս գրքում արդէն իսկական բանաստեղծ է խօսում: Հիանալի պատկերներ, խոհուն մտքեր, յորդոր, թելադրանք ուղղուած հայ մարդուն, բանաստեղծելու գիւտ, նոր խօսք. Տեսիլք չես դու, ոչ էլ երագ, Չքնաղ երկիր Նաիրի, Գալիք ես դու, ոչ թէ անհաս Յոյսն ու լոյսն ես ապագայի: Գալիք ես դու, կը փողփողաս Ալիքներում Սեւանի, ԱՆԴՐԱԴԱՐՁԴՊԻՏԻ ԽԱՅՏԱ ԾՈՎԱԿԻ ՄԵԾ ԻՄ ՎԱՆԻ: Ինչո՞վ գիւտ չէ Սօնա Տիգրանեանի «Երկիր Նաիրի» բանաստեղծութեան վերջին երկու տողը: Մասիսապաշտ Շիրազն արդեօք ի՞նչ կ'ատէր Սօնա Տիգրանեանի հետեւեալ քառեակի համար. Կանգնած եմ միշտ իրար կողքի, Նշխար անարատ, Ուս ուսի Սիս ու Մասիս, Իսկ միասին՝ Արարատ: Սօնա Տիգրանեանի յաջորդ երկու գրքերը վերահրատարակութիւններ են («Պատկերազարդ այբբենարան», «Գիրք-Տետր»)՝ տպագրուած 2016 եւ 2017 թ.թ., որոնք ծառայում են նախադպրոցական երեխաների հայեցի դաստիարակութեանը: Մենք այստեղ համարեայ չիստեցինք Գրող-բանաստեղծ Սօնա Տիգրանեանի հայաստանեան գրականագիտական, հասարակական գործունէութեան մասին: Մեր նպատակն էր ձեռքի տակ եղած նրա հեղինակած գրքերի միջոցով ընթերցողին ներկայացնել Սօնա Տիգրանեանին որպէս շնորհալի գրող-բանաստեղծի: Թէ որքանով դա մեզ յաջողուեց՝ կ'ասի ընթերցողը:

1998-2008. Ռոբերտ Քոչարեանի Արիւնոտ Տասնամեակը

Շարունակուած էջ 8-էն

մի շարք կողմնակիցներ: Բաբայեանն ազատ արձակուեց 2004 թուականին: Անօրինական հետապնդումների են ենթարկուել 2000թ. Հոկտեմբերի 30-ի հանրահաւաքի բազմաթիւ մասնակիցներ: Նրանցից 17-ը ենթարկուել է 7-ից 30 օր ժամկէտով վարչական կալանքի, 4-ը տուգանուել է, իսկ հանրահաւաքի կազմակերպիչ Արկադի Վարդանեանը 4 ամսուայ բանտարկութիւնից յետոյ արտաքուեւ է Հանրապետութիւնից: Հայաստանից տարագրուել են նաեւ Ա. Վարդանեանի բազմաթիւ համախոհներ, այդ թւում՝ նրա փաստաբան Կարօ Կարապետեանը («Ռ. Քոչարեանի պաշտօնանկման հիմքերը» գրքի հեղինակը), երիտասարդական կազմակերպութեան ղեկավար Արսէն Արզումանեանը: 2001թ. Յունիսին մահափորձ է կատարուել «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակեյեանի դէմ, 2001թ. Սեպտեմբերի 7-ի խաղաղ հանրահաւաքից յետոյ նա ոստիկանների կողմից ծեծի է ենթարկուել իր տանը: 2001թ. Սեպտեմբերի 13-ին ձերբակալուել եւ երկու ամիս բանտում պահուելուց հետո ազատազրկման է դատապարտուել (պատժի կատարումը պայմանականօրէն յետաձգուել է) խորհրդային տարիների յայտնի այլախոհ, Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցութեան հիմնադիր, ընդդիմադիր գործիչ Ազատ Արշակեանը: Ա. Արշակեանի հետ ձերբակալուել են նաեւ նրա մօտ տասը համախոհներ: 2001թ. Հոկտեմբերի 12-ից ակնյայտ քաղաքական դրդապատճառներով բանտարկութեան մէջ է գտնուել ներքին գործերի նախարարութեան քրէական պատիժների իրականացման վարչութեան նախկին պետ, գնդապետ Մուշեղ Սաղաթեյեանը: Նա ազատազրկուեց մինչեւ 2003-ի Սեպտեմբեր ամիսը: 2002թ. Յունուարի 26-ից ԱԱԾ մեկուսարանում է գտնուում թուրքագետ Մուրադ Բոջոլեանը՝ հայրենիքի դաւաճանութեան եւ յօգուտ թուրքիայի լրտեսութեան կեղծ մեղադրանքով: 2002թ. Յունիսի 15-ին Արարատ քաղաքում գրապարտութեան մեղադրանքով ձերբակալուել է բանաստեղծ Ջանիկ Ադամեանը՝ մի բանաստեղծութեան համար, որտեղ կան «անարուհաց քրդի շուն» բառերը, եւ որը, որպէս թուրքիկ, փակցուել է պատերին: Նա ազատ է արձակուել Օգոստոսի 26-ին: 2002-2003թթ. պետական կազմակերպուած հետապնդումների ու հետեւողական ճնշումների արդիւնքում սնանկացուեց մոսկուայաբնակ հայազգի գործարար Լեւոն Մարկոսի պատկանող Կրեդիտ-Երեւան բանկը, իսկ Մարկոսի հանդէպ յարուցուեց շինծու քրէական գործ: 2003թ. Փետրուարի 4-ին Արտաշատում նախագահի թեկնածու Արամ Կարապետեանի հանրահաւաքի ժամանակ դանակահարուեց վերջինիս նախընտրական շտաբի պետ, ԱԺ պատգամաւոր Հայկ Բաբուխանեանը: 2003թ. Մարտի 15-ին Տիգրան Նաղդալեանի սպանութիւնը կազմակերպելու մեղադրանքով ձերբակալուել է 1999թ. Հոկտեմբերի 27-ին ԱԺ-ում սպանուած վարչապետ Վազգէն Սարգսեանի, ինչպէս նաեւ ընդդիմութեան առաջնորդներից մէկի՝ «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանի եղբայր Արմէն Սարգսեանը: Չնայած նրա մեղքը ապացուցող փաստերը բացակայում էին, բայց դատարանը նրան դատապարտեց 15 տարուայ ազատազրկման: 2003թ. Մարտի 15-ին Հելսինկեան քաղաքացիական ասամբլեայի վանաձորի գրասենեակի մօտ կազմակերպուած բողոքի ակցիայի ժամանակ ձերբակալուել է այդ կազմակերպութեան ղեկավար Արթուր Սաքունցը: Կարճատեւ դատավարութիւնից յետոյ նա ենթարկուել է 10-օրեայ վարչական կալանքի: Մինչ այդ նա անյայտ անձանց կողմից յարձակման էր ենթարկուել, իսկ լոյս 15-ի գիշերը անյայտ անձինք հրկիզել էին նրա գրասենեակը: 2003թ. Յունիսի 25-ին, ժամը 12-ի սահմաններում, Նուբարաշենի խճուղու վրայ անյայտ անձինք կրակահերթ էին արձակել «ԳԱԶ-3129» մակնիշի տաքսի աւտոմեքենայի վրա եւ սպանել մեքենայի վարորդ Սաշիկ Յակոբեանին, ուղեւորներ՝ ՀՀ ՊՆ բուժվարչութեան պետի տեղակալ Գարիկ Յարութիւնեանին, Արկադի Գէորգեանին: Ուղեւորներից Արտիոմ Գէորգեանը ստացել էր ծանր մարմնական վնասուածք: Արտիոմ եւ Արկադի Գեորգեաններն ԱԺ նախկին պատգամաւոր Ռուբէն Գէորգեանի եղբորորդիներն էին: 2003թ. Յունիսի 22-ին մահափորձ է կատարուել էրբեւնի համայնքի ղեկավար Մհեր Սեդրակեանի դէմ (պայթեցուել է նրա աւտոմեքենան):

(Շարունակելի)

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէ՛ն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՄՊԱՍԵԼՈՎ ԳՎԼԻՔ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ

Շարունակուած էջ 15-էն

բերած է իր հօր ստեղծագործութիւններէն, որոնցմէ ոմանք կը գտնուին տարբեր երկիրներու պետական թանգարաններուն մէջ եւ նուիրուած էին Եթովպիոյ կայսրին կողմէ:

Ուշագրաւ յաւելում մըն էր Եթովպիոյ հայ համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Նալպանտեանի դասախօսութիւնը՝ Եթովպիոյ հայութեան կեանքին նուիրուած: Նալպանտեան կը հանդիսանայ ապրող պատմութիւնը գաղութին: Իր ունեցած հարուստ ծանօթութիւններն ու արխիւները, քարտէսներն ու նկարները եւ անձնական յուշերը, ծառայելու են լուրջ հետազօտութեանց որպէս սկզբնաղբեր: Ան կը յամառի մնալ Ատիս Ապպա, հակառակ իր ընտանիքին հանդէպ իշխանութիւններուն գործադրած կալուածներու բռնագրաւումներուն եւ կատարած անիրաւութիւններուն: Հարիւր հոգի հաշուող Եթովպիոյ գաղութի որպէս առաջնորդը ան ճիգ չի ինայեր պահելու եկեղեցին, դպրոցն ու ակումբը որպէս հայապահպանման ամրոցներ:

Գիտաժողովի առանձնաշատ կութիւններէն էր երիտասարդներու ընդգրկումը որպէս գեկուցաբերներ, ինչպէս նաեւ գեկուցները՝ երիտասարդական շարժումներու շուրջ:

Հետաքրքրական էր գուգորութիւնը Գահիրէի «Հիւսիսեմբեր» (1975-1980) եւ Պէյրութի մէջ լոյս տեսած «Երիտասարդ Հայ» (1969-1975) երիտասարդական թերթերուն առնչութեամբ: Ասիկա հրամցուեցաւ մտաւորականներ թովմաս Զաքարեանի եւ Ժիրայր Դանիէլեանի կողմէ: Զոյգ հանդէսներու խմբագիրներն ու խմբագրական կազմերը նոյնանման առաջադրանքներով ճամբայ ելած էին իրարմէ անտեղեակ: Կուսակցական կադապարումէ գերծ եւ անկախ մտածողութեամբ օժտուած երիտասարդական այս շարժումները նոր մտածողութիւն յառաջացուցին հայ կեանքին ներս, քննադատելով երէցներու գործելակերպը եւ նոր ուստեղծագործ որոնումներու մղելով հայ հաւաքական ազգային կեանքը:

Երեւոյթ էր Ասփէ ձիգմէճեանի գեկուցը՝ «Հայ ինքնութեան Հարցը Եգիպտոսի Հայօճախին Մէջ» նիւթով: Յատուկ հարցաթերթիկներէ խմբագրած պատասխաններու հիման վրայ, երիտասարդ ուսումնասիրողը բացայայտեց Եգիպտոսի հայօճախին պատկանող երիտասարդ անդամներու բազմամշակութային էութիւնը, որ առհասարակ տեղայնացուած բնոյթ ունի եւ կը քննէ, թէ անոնք ինչպէս կ'ապրին իրենց հայկական ինքնութիւնը: Զիգմէճեան կը հարցադրէ այդ կենսաձեւի ճշգու թիւնը եւ քննելով հայօճախի ընկերային եւ մշակութային կեանքը՝ զայն կը տեղաւորէ եգիպտական տեղական ընկերութեան հետ իր փոխարարբերութեան եւ առնչութեան ենթահողին մէջ: Ի վերջոյ կը հաստատէ, որ արդեօք հայկական ինք-

նութիւնը եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման համար մղուած պայքարը գիրար կ'ամբողջացնեն եւ անքակտելիօրէն կապուած են իրարու:

Վաւերագրական նշանակութիւն ունէր երիտասարդ Այգ Զաքարեանի «Եգիպտահայ Համալսարանականները» նիւթով գեկուցը: Առհասարակ մեր տրամադրութեան տակ չունինք նման աշխատասիրութիւններ միջինարեւելեան երկիրներու հայ ուսանողութեան վերաբերեալ: Այստեղ վիճակագրական տուեալներով ներկայացուեցան եգիպտահայ համալսարանականներու յաճախած եգիպտական եւ արտասահմանեան համալսարանները, մասնագիտութիւնները, ինչպէս նաեւ դիմա գրաւած խոչընդոտները, համայնքին կեանքին մէջ համարկուե լու ճիգերը, ասպարէզային կարելիութիւնները եւ 21-րդ դարու պարտադրանք հանդիսացող ուսանողութեան ձեռք բերելիք հնարամտութիւններն ու ճարտարութիւնները:

Ուշագրաւ էր Եգիպտոսի հայութեան նուիրուած գեկուցներուն մէջ Արմին Քրէտեանի «Մարդահամարներու Ընթացումը. 1906-07ի Գահիրէի Հայոց եւ 1911-ի Աղեքսանդրիոյ Հայոց Մարդահամարները»: Այս արխիւները կը վկայեն եգիպտահայ գաղութի կազմակերպուած վիճակին մասին՝ Ա. Աշխարհամար տէն առաջ: Գաղութը մեծ թիւով հայեր կրցաւ ընդունիլ 1895-96-ի եւ 1909-ի օսմանեան ջարդերէն ետք, որուն պատճառաւ մեծ աճ արձանագրեց եգիպտահայութիւնը Ի. դարասկիզբին: Կարգ մը հարցադրումներ կը բխին սոյն մարդահամարներու սերտողութենէն, թէ այստեղ նշուած ընտանիքներու ժառանգորդները ներկայիս ինչ պատկեր կը ներկայացնեն եւ որքանով կրնան օգնել գաղութի պատմական տուեալներու մէկտեղման եւ արձանագրութեան: Հարց է, թէ որքան ժամանակ կրնան դիմանալ սոյն մարդահամարներու ձեռագիրները: Զեկուցաբերը կոչ կ'ընէ անյապաղ թուայնացնելու գանոնք, որպէսզի անոնք մատ չէլի ըլլան հաւասարապէս թէ՛ հանրութեան եւ թէ՛ հետազօտողներուն:

Նոյն մտահոգութիւնը կ'արտայայտէր նաեւ Գոհար Աւագ եւ նը, որ «Հայաստանի Ազգային Արխիւի Եգիպտահայ Նիւթերը եւ Եգիպտոսի Հայոց Առաջնորդարանի Արխիւային Նիւթերը» գեկուցով կը շեշտէր կարեւորութիւնը Սփիւռքի հայ համայնքն երու արխիւային ժառանգութեան պահպանելու եւ հայ պատմագրութեան ու ընդհանրապէս հայագիտութեան համար մատչելի դարձնելու հարցին: Յիշատակութիւն եղաւ 2006-12-ին կատարուած աշխատանքներուն մասին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի եւ Համազգային Մշակութային Միութեան արխիւներուն մէջ: Իսկ 2017-էն սկսեալ Գահիրէի Հայոց առաջնորդ գերաշնորհ Աշոտ եպիսկոպոս Մնացականեանի նախաձեռնութեամբ

նման աշխատանքներ կը կատարուին Գահիրէի Հայոց Առաջնորդարանի արխիւներուն մէջ: Զեկուցը կը ներկայացնէ Առաջնորդարանի արխիւին տակաւին գիտական շրջանառութեան մէջ չմտած աղբիւրագիտական նշանակալի հարստութիւնը ոչ միայն եգիպտահայ համայնքի ներքին կեանքի, այլեւ համահայկական տարողութիւն ունեցող տարբեր մարգերու մասին:

Սոյն երկու գեկուցաբերներու կոչերը իւրապատուկ հնչեղութիւն տուին եւ իրենց ազդու ձայնը միացուցին Միջին Արեւելքի համայնքներու արխիւներու ճակատագրին շուրջ, նախանձախնդիր ազգայիններու բարձրացուցած ահազանգին, գանոնք անյապաղ թուայնացնելու եւ հանրութեան սեփականութիւնը դարձնելու անյետաձգելի նախաձեռնութեան:

Շատ մեծ շահեկանութիւն ունէր Դոկտ. Նայիրի Համբիկեանի գեկուցը՝ նուիրուած Սփիւռքի հայկական ճարտարապետութեան ճակատագրին: Անոր ներկայացուցած Մարմինայի հայ կական պատմական գերեզմանատան օրինակը խօսուն էր եւ ուսանելի Սփիւռքի տարածքին գտնուող ճարտարապետական կոթողներուն պահպանութեան առնչութեամբ: Դոկտ. Համբիկեան որպէս ճարտարապետ կը գլխաւորէ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի կողմէ հովանաւորուած գերեզմանատան վերականգնումի աշխատանքները: Այդ ծիրին ներս կատարուած յայտնաբերումները կը վկայեն եգիպտահայ համայնքի բազմաշերտ պատ-

մութեան ընթացքին իրագործուած հայ ճարտարապետական արուեստի այլազան ոճերու դրսեւորումը 19-րդ եւ 20-րդ դարաշրջաններուն:

Վերականգնումի այս անգնահատելի փորձառութիւնը թելադրական է Սփիւռքի մէջ գտնուող բոլոր հայկական կառուցաներու հանդէպ նմանօրինակ վերաբերմունքի եւ նախանձախնդիր կեցուածքի որդեգրման համար, որպէսզի մեր ժողովուրդին կա ունեցած յուշարձանները ժամանակի փոշիին տակ մնալով չանհետանան, այլ դառնան սփիւռքահայ ճարտարապետական ժառանգութեան կենդանի եւ խօսուն վկաններ բոլոր ժամանակներուն համար:

...«Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ Հայերը» գիտաժողովը իր շօշափած այլազան նիւթերով, բարձրորակ մատուցումով եւ ակադեմական մակարդակով հարստացնող եւ գտնաւորող փորձառութիւն մը հանդիսացաւ մասնակիցներուն համար: Ամէն գնահատանքէ վեր է Հայկական Համալսարանի Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի տնօրէնութեան թափած ճիգերը նման բարձրորակ գիտաժողովներու կազմակերպման մէջ: Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը, լաւագոյնս գնահատելով սոյն աշխատանքներու կարեւորութիւնը, կ'ապահովէ անոնց շարունակականութիւնը, յատկացնելով անհրաժեշտ օժանդակութիւնը:

Սպասելով յառաջիկայ տարիներու համար նախատեսուած ծրագիրներու իրագործման, կը մաղթենք նոր ու եռուն տարեշրջան մը 2018-2019-ի ընթացքին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ
 ՓԱՍՍԻՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԳՈԳԻ ԳԱՍԱՐ)
 ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԳԱՍԱՐ
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
 ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻԻՆԵՐ՝
 ԳԵՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles
 Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար
 Հեռաձայնէ՛ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՇՆՈՐՅԱԲՈՐՈՒԹԻՒՆ
 Պրն. Աբգար Գրիգորեան ընդ Օր. Ժանէթ Փանիա
 4 Օգոստոս, 2018 Փաստինս
 Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու երջանիկ կեանքի բարեմաղթութիւնները նպրապսակ գոյգին եւ անոնց ընտանեկան համայն պարագաներուն: Մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սեդա Գրիգորեանին:

ՄԱՐԶԱԿԱՆ

Յովհաննէս Մաղաքեանը Երրորդ Ոսկէ Մետալը Բերեց Ազատ ՌՃԻ Ըմբշամարտի Հայաստանի Թիմին

Հայաստանի ներկայացուցիչ Յովհաննէս Մաղաքեանը (125 կգ) նուաճեց ազատ ոճի ըմբշամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութեան ախոյեանի տիտղոսը՝ երրորդ ոսկէ մետալը բերելով Հայաստանի թիմին:

Ի տալիս ի մայրաքաղաք Հոնոնում աւարտուած ըմբշամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութեան գերծանք քաջայինների պայքարի եզրափակիչում Յովհաննէս Մաղաքեանը 4:2 հաշուով յաղթեց ուկրաինացի Յուրի Իդզինսկուն:

Մաղաքեանը պայքարը սկսել էր Օգոստոսի 4-ին, երբ վրացի (7:3) ու ատրպէյճանցի (5:2) ըմբիշների նկատմամբ յաղթանակներից յետոյ կիսաեզրափակիչում 8:2 հաշուով ուժեղ էր գտնուել լեհ Յակուբ Բրիլեւսկուց:

Մաղաքեանը ոճի ըմբշամարտի Հայաստանի երիտասարդական հաւաքականի 5-րդ մետալն էր Եւրոպայի առաջնութիւնում: Օգոստոսի 5-ին Եւրոպայի երիտասարդական ախոյեանի կոչումը նուաճել էր նաեւ 61 կգ քաջային Վազգէն:

Թեւեալներ, որը եզրափակիչում 5:2 հաշուով յաղթեց ատրպէյճանցի Ինտիհամ Վալիգադաչին: Նախօրէին ոսկէ մետալ էր նուաճել նաեւ 57 կգ քաջային Արսէն Յարութիւնեանը: Օգոստոսի 4-ին պրոնզէ մետալակիր էին դարձել

Գեղամ Գալստեանը (65 կգ) եւ Արման Անդրէասեանը (70 կգ): Օգոստոսի 5-ին պրոնզէ մետալի համար գոտեմարտեր անցկացրին նաեւ Հայաստանը ներկայացնող Հրայր Ալիխանեանը (74 կգ) եւ Մհեր Մարկոսեանը (86 կգ), որոնք յաջողութեան չհասան:

Հրայր Ալիխանեանը սիովիիզ գոտեմարտում 18:8 հաշուով յաղթեց ուկրաինացի Եւգենի Դուբովիին, սակայն պրոնզէ մետալի համար պայքարում 5:10 հաշուով պարտութիւն կրեց ատրպէյճանցի Իսմայիլ Աբդուլաւեից:

Մհեր Մարկոսեանը սիովիիզ գոտեմարտում 2:1 հաշուով ուժեղ գտնուեց ատրպէյճանցի Իսլամ Իլյասովից, իսկ պրոնզէ մետալի համար գոտեմարտում 4:8 հաշուով պարտուեց վրացի Դեմուր Մեգենիշվիլուն:

Յատկանշական է, որ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի երիտասարդական հաւաքականի բոլոր՝ 8 ըմբիշները Եւրոպայի առաջնութիւնում անցկացրին մետալի համար գոտեմարտ: Հայաստանի թիմը ելույթն աւարտեց 3 ոսկէ եւ 2 պրոնզէ մետալով՝ թիմային հաշուարկում գրաւելով երրորդ տեղը եւ գիջելով Ռուսաստանին ու Թուրքիային:

Յիշեցնենք, որ Նունահոմեական ըմբշամարտի Հայաստանի երիտասարդական հաւաքականը Եւրոպայի առաջնութիւնում ելույթն աւարտել էր 1 ոսկէ եւ 4 պրոնզէ մետալով՝ թիմային հաշուարկում գրաւելով երրորդ տեղը:

Յունահոմեական ըմբիշներից Եւրոպայի երիտասարդական ախոյեան էր դարձել 55 կգ քաջային Տիգրան Մինասեանը, իսկ Արարատ Մանուչարեանը (60 կգ), Մալխաս Ամոնեանը (72 կգ), Վահէ Պողոսեանը (77 կգ) եւ Դաւիթ Յովասափեանը (130 կգ) արժանացել էին արծաթէ

Հայաստանը 2ի Մասնակցի Եւրոբասկետ-2021-ի Երկրորդ Փուլին

Ինչպէս յայտնի է Հայաստանի հաւաքականն իրաւունք էր ստացել մասնակցել Եւրոբասկետ-2021-ի նախընտրական 2-րդ փուլին, որը մեկնարկում է Սեպտեմբերին:

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս Հայաստանում չկայ նախընտրական 2-րդ փուլի պահանջներին համապատասխանող մարզադահլիճ, Հայաստանի պասքետպոլի ֆեդերացիան որոշում է կայացրել հրաժարուել նախընտրական 2-րդ փուլին մասնակցելու իրաւունքից:

Հայաստանի փոխարէն նախընտրական փուլում հանդէս կը գայ Կիպրոսը:

Պասքետպոլի ֆեդերացիայի գլխաւոր քարտուղար Արթուր Նազարեանը «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց, որ հարցը մի շարք տեխնիկական խնդիրների հետ է կապուած.

«Զամբիւղների, լուսատախտակների, նստատեղերի քանակի, որոնք պէտք է 3000-ից ոչ պակաս լինեն, եւ այլ տեխնիկական պահանջներին համապատասխան մարզադահլիճ Հայաստանում չկայ: Վերջին մեկ տարում «Միկա» մարզադահլիճում էինք միջազգային հանդիպումներ անցկացնում, սակայն թոյլտուութիւնը դժուարութեամբ էինք ստանում, մեր խնդրանքներին ընդառաջ էին գնում, իսկ Եւրոբասկետ-2021-ի նախընտրական 2-րդ փուլի պահանջներն աւելի խիստ են եւ բացառութիւն անել այլեւս հնարաւոր չէ»:

«Մանչեսթեր Սիթին»՝ Անգլիայի Սուպերգաւաթակիր



«Մանչեսթեր Սիթին» պատմութեան մէջ 5-րդ անգամ դարձաւ ֆուտպոլի Անգլիայի սուպերգաւաթակիր:

Սուպերգաւաթի խաղում Անգլիայի նորընծայ ախոյեանը 2:0 հաշուով պարտութեան մատնեց Անգլիական լիգայի գործող գաւաթակիր Լոնդոնի «Չելսիին»: Լոնտոնի «Ուեմբլի» ստադիոնում կայացած խաղում դուբլի հեղինակ դարձաւ արժեք թիւնացի յարձակող Սերխիո Ագուերոն:

30-ամեայ Ագուերոն առաջին ֆուտպոլիստն է, որը 200 զոլ է խփում «Մանչեսթեր Սիթիին» կազմում: Անգլիական ակումբում նա անցկացրեց 293-րդ հանդիպումը եւ կոլերի քանակը հասցրեց 201-ի:

«Մանչեսթեր Սիթին» Անգլիայի Սուպերգաւաթը նուաճել էր նաեւ 1937, 1968, 1972 եւ 2012 թուականներին: «Չելսին» Անգլիայի սուպերգաւաթակիր դարձել է 4 անգամ (1955, 2000, 2005, 2009),

«Յուվենտուսը» 55 Հազար Մարգաշապիկ է Վաճառել Ռոնալդուի Ազգանունով

Թուրինի «Յուվենտուսը» ներկայացրել է ակումբային ատրիբուտիկայի վաճառքի հաշուետուութիւնը նոր մրցաշրջանի մեկնարկից առաջ:

Իտալիայի ախոյեանը վաճառել է նոր մարգաշապիկների առաջին մասնամբողջութեամբ: Մարդիկ «Ռեալից» տեղափոխուած պորտուգալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալդուի տրանսֆերից յետոյ «Յուվենտուսի» մարգաշապիկների վաճառքը զգալիորէն աճել է: Նշում է, որ Յուլիսի 10-ից Օգոստոսի 5-ը թուրինեան ակումբը մօտ 55 հազար մարգաշապիկ է վաճառել Ռոնալդուի ազգանունով:



Այդ վաճառքների ստացուած հասոյթը կազմել է 6.5 միլիոն եւրօ: Նոր մարգաշապիկների վաճառքի երկրորդ փուլը սպասուած այս տարուայ Սեպտեմբերին:

Յիշեցնենք, որ այս ամռանը Իտալիա տեղափոխուած 33-ամեայ պորտուգալացին «Յուվենտուսի» հետ կնքել է 4 տարուայ պայմանագիր, իսկ նրա տրանսֆերը կազմել է 112 միլիոն եւրոյով: Իտալական ակումբում Ռոնալդուի տարեկան աշխատավարձը կը կազմի 30 միլիոն եւրօ: Նա «Ռեալում» հանդէս է եկել 2009-2018-ը՝ անցկացրած 438 խաղում դառնալով 450 կոլի եւ 131 կոլային փոխանցման հեղինակ:

Ռայլան «Մանչեսթեր Յունայթեդի» Հետ Կը Բանակցի Պոզբայի՝ «Բարսելոնա» Տեղափոխուելու Հարցով

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» կիսապաշտպան Պոլ Պոզբայի գործակալ Մինօ Ռայլան անգլիական ակումբի ղեկավարութեան հետ բանակցութիւններ կը սկսի Ֆրանսայի հաւաքականի ֆուտպոլիստի՝ «Բարսելոնա» տեղափոխուելու հարցով, գրում է Daily Star-ը:



Իտալացի գործակալը «Մանչեսթեր Յունայթեդին» կը փորձի համոզել Պոզբային վաճառել «Բարսելոնային»: Տրանսֆերը կարող է կազմել 100 միլիոն ֆունտ ստերլինգ:

Աւելի վաղ լուրեր էին շրջանառուած, որ Պոզբայի ու «Մանչեսթեր Յունայթեդի» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրինիոյ յարաբերութիւնները սրուել են: Ֆրանսացի կիսապաշտպանի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2021 թուականի ամառը:

Անգլիայի աւարտուած առաջնութիւնում Պոզբան մասնակցել է 27 հանդիպման, խփել է 6 կոլ ու կատարել 10 կոլային փոխանցում: